



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Joseba Sarrionandia
Kartzelak eta erbesteak

Kristina Kocharyanek armenierara itzulita

Joseba Sarrionandia
Prisons and exiles

Translated into Armenian by
Christina Kocharyan

Stepanakert, 2022

Խոսեք ա ՍԱՐԻՈՆԱՆԴԻԱ

**ԲԱՆՏԵՐ
ԵՎ
ԱՔՍՈՐՆԵՐ**

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ, 2022

ՀՏԳ 821.361-1 Սարիոնանդիա

ԳՄԴ 84(4Իսպ-4Բաս)-5

Ս 265

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Խոսերա ՍԱՐԻՈՆԱՆԴԻԱ

Ս 265 ԲԱՆՏԵՐ ԵՎ ԱԶՍՈՐՆԵՐ: Բանաստեղծություններ:

(թարգմ. անգլերենից՝ Ք. Քոչարյանի),

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2022, 144 էջ:

Գրքում ամփոփված է բասկյան բանաստեղծ եւ ազատագրական շարժման գործիչ Խոսերա Սարիոնանդիայի ստեղծագործությունների ընտրանին՝ նրա տարբեր ժողովածուներից: Ներկայացվող բանաստեղծությունների մի զգալի մասը վերածվել է երգերի եւ տարածվել Բասկերի երկրում ու նրա սահմաններից դուրս: Հեղինակի բազմաթիվ գործեր թարգմանվել ու հրատարակվել են իսպաներեն, ֆրանսերեն, անգլերեն եւ գերմաներեն:

Հայ ընթերցողը լավ հնարավորություն ունի՝ առնչվելու բասկյան ոգուն եւ բանաստեղծական մի ուրույն ու կենսահույզ աշխարհի, ուր շատ տառապանք, սեր ու նվիրում կա: Ժողովածուն հայերեն առաջին հրատարակությունն է բասկյան գրականությունից:

Funding for the translation of this book has been provided by the Etxepare Basque Institute



**ETXEPARE
EUSKAL
INSTITUTUA**

Գրքի թարգմանությունը ֆինանսավորել է Բասկյան Etxepare ինստիտուտը

ISBN 978-9939-1-1440-8

ՀՏԳ 821.361-1 Սարիոնանդիա

ԳՄԴ 84(4Իսպ-4Բաս)-5

© Joseba Sarrionandia, 2022

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2022

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ

*«Մենք արշալույսի երեխաներն ենք:
Մենք քափառում ենք ծովի ափերով...»¹
Ժոզե Աֆոնսո*

¹ Պորտուգալացի Ժոզե Աֆոնսոյի գրառած ժողովրդական երգից:

ՄՈԼՈՐՎԱԾ ԹՈՉՈՒՆՆԵՐ

մոլորված թռչուններն
իջան
պատուհանին
որտեղից լույսն ու ստվերը
հեռանում էին
որտեղ լույսն ու ստվերը
պատուհանին
իջան
մոլորված թռչունների վրա

ՆՐԱՆՑ, ՈՒՄ ԱՐՄԱՏՆԵՐՆ ԱՅՆՏԵՂ ԵՆ

*Schwererläßt was nahedem
Ursprungwohnet, den Ort.
Friedrich Hölderlin¹*

Ցավալի է, որ հայրենի հողը լքում են նրանք,
ում արմատներն այնտեղ են քաղված:
Ցավալի է, որ ծառը չորանում է
դեռ բերքը չհավաքված:
Թարթիչն աչքը չի լքում,
եթե բաժին չի ընկնում ագռավի կտուցին:
Ցավալի կլինի, եթե աղը լքի ծովը
կամ ավազն՝ անապատը:
Ոչ ծաղիկն է լքում գարունը,
ոչ էլ ձյունն՝ իր ճերմակությունը:
Ցավալի է, որ հայրենի հողը լքում են նրանք,
ում արմատներն այնտեղ են քաղված:

¹ /գերմ./- Դժվար է լքել ակունքները:
Ֆրիդրիխ Հյոլդերլին

ՔԱՆՁԻ ՈՉ ՈՔ ԻՆՉ ՉԻ ԱՍՈՒՄ

Քանզի ոչ ոք ինձ չի ասում,
որ պետք է սիրեմ, շարունակեմ
սիրել այն, ինչ սիրում եմ:
Քանզի ինձ ոչ ոք չի ասում, որ
ես սիրում եմ անապատ ու չլվող աստղեր:
Աննպատակ նավեր,
կեսգիշերային ջութակներ,
պատկերված արշարույսներ,
փոքրիկ թռչնի ոսկորների շարժումներ,
խնձորենուց կախված դեղին սրտիկներ,
անչափ տխրությամբ համակված աղջիկներ,
և քո ժպիտը, քո ժպիտը նույնպես,
քանզի ինձ ոչ ոք չի ասում, բայց ես սիրում եմ:

ՏՈՒՆԳԱՐՉ

Ես հեռացա տնից և, քարտեզները
որպես գանձ թևիս տակ, գնացի
որոնելու ջրահարսերի երգերը
սարսափների թաքստոցներում:

Մոխրագույն փոքրիկ կայծքարեր,
սև կեռնեխների փտող բներ
մութ ջունգլիների կորած անկյուններում –
միակ գտածս բաներն են իմ ճամփին:

Երբ ճամփորդությունս ավարտվեց,
և ես տուն դարձա,
քո դռան փայտը նոր էր,
կողպեքը՝ նույնպես:

ԽՈՐՀՐԳԱԾԵԼՈՎ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք միշտ կապված ենք լարերով, լարեր,
որ սատարում են մեր մեջքը,
Լարեր, որոնք շարժում են մեր ոտքերը, լարեր,
որոնք բարձր են պահում մեր գլուխը,
Լարեր հիշողությունների, իրականության լարեր,
ցանկության լարեր,
Լարեր, որոնք երբեմն կտրվում են, լարեր,
որ միացվում են միմյանց ու նաև խճճվում,
Լարեր խճճված, որոնցով երբեմն սայթաքում ենք,
լարեր, լարեր:
Այնուամենայնիվ, եթե կարելի է՝ ավելի լրջանամ ու
մեջբերեն ֆրանսիացի փիլիսոփային.
«Հարցը ոչ թե այն է՝ ինչպես են նրանք մեզ
վերաբերվում, այլ այն՝ ինչպես ենք մենք
վերաբերվում նրանց վերաբերմունքին»:

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱՆՏԻ ԹԵՄԱՅՈՎ**

*Ես սայթաքեցի ու ընկա ժայռի քար...
Հո Շի Միւ*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երբ կոմիսար Անխել Մարտինեսը մտցնում է
ատրճանակի փողը
մերկ բանտարկյալի անուսը և դուրս հանում կեղտոտ
ու արնապատ /հուզիչ տեսարան/,
ի՞նչ նշանակություն ունի խոշտանգված տղայի համար,
որ պոետը *um fingidor*¹ է
կամ Գիլբերտ Կիտ Չեսթերտոնը երբևէ այցելել է
*La Salve*²,
ով է *Ինչատրոնդոյի*³ բանտերում
ճանաչում *Հերման Բրոխի*⁴:
Ինչպե՞ս խոշտանգված տղան, կործանված լինելով,
դատավորի առաջ արտահայտի

1. *um fingidor* – արտահայտություն պորտուգալացի պոետ Ֆերնանդո Պետասի «Ինքնահոգեբանություն» տեքստից. «*O poeta e um fingidor*»՝ նշանակում է «բանաստեղծը կեղծարար է»:

2. *La Salve* – Իսպանիայի քաղաքացիական գվարդիայի շրաբը Բիլբաո քաղաքում: Այն նախկինում եղել է գավառի պահապան սուրբ Բեգոնիա կույսին նվիրված եկեղեցի: Բաց ծովից վերադարձած բասկ նավաստիներն իրենց արդեն «փրկված» էին համարում՝ հենց տեսնում էին նրա սայրաշողը:

3. *Ինչատրոնդո* – քաղաքացիական գվարդիայի շրաբը Դոնոսոյի-ա (Սան Մեբաստիան) քաղաքի *Ինչատրոնդո անունով* քաղամասում: ԷՏԱ -ի («Բասկերի երկիր և ազատություն»)՝ բասկյան ազգայնական անջարողականների կազմակերպություն) քաղմաթիվ կասկածյալներ այնպեղ խոշտանգումների են ենթարկվել քաղաքացիական գվարդիայի կողմից:

4. *Հերման Բրոխ* – ավստրիացի հրեա, «Վիրգիլիոսի մահը» (1945) գրքի հեղինակ:

*օբյեկտիվ հարաբերակցություն*⁵ հասկացության
ճշգրիտ իմաստը:
Մոլի Բլումին ի՞նչ, որ *Կարաբանչե*⁶ բանտի
արշալույսն ընկնում է ասեղների ծակերով:
Ո՞վ է Միշել Ֆուկոն տաս ամիս
մենախցում անցկացնողի համար՝
հինգ րոպեյով տեսակցության եկող ընկե՞ր,
թե՞ հասարակական կառույց:
Պե՞տք է բասկ բանտարկյալներն ուսումնասիրեն
*Ժան Դյուվուազենի*⁷ Աստվածաշունչը
*Էյչեր*⁸ ու ստորակետներն իրենց արգելված
նամակներում ճիշտ օգտագործելու համար:

5. «Օբյեկտիվ հարաբերակցություն» - գրական եզրույթ, որը տարածել է Թ. Ս. Էլիոթը՝ նկատի ունենալով իր գեղարվեստական հնարքը, որով հույզեր է արթնացնում ընթերցողների մոտ, քանի որ, ըստ նրա, բանաստեղծը չի կարող ուղղակիորեն փոխանցել զգացմունքները:

6. Կարաբանչե – բանտ Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում: Կառուցվել է Իսպանիայի քաղաքացիական պատերազմի քաղաքամարտիկների համար, Մադրիդի Կարաբանչե արվարձանում: Բնքը՝ Սարիոնանդիան, այնպես էր քանդակված էր 1980-ի վերջից մինչև 1981-ի հունվար: Նա կրկին քանդակվել է 1983-ին և մասնակցել քանդակարկյալների հացադուլին: Կարաբանչեը փակվել է 1998 թվականին:

7. Ժան Դյուվուազեն – ֆրանսիացի մաքսավոր և բասկ գրող: Բասկերեն բարգմանել է Աստվածաշունչը, ի թիվս բազմաթիվ այլ գործերի:

8. Էյչեր /aitches/ – 1960-ականներին և 1970-ականներին բուռն բանավեճ կար բանասերների, լեզվաբանների և գրողների միջև, որոնք զբաղված էին մի քանի խոսակցական բարբառներից միասնական բասկերեն լեզու սրելով խնդրով: Ի (էյչ) տառը, Բասկերի Երկրի հյուսիսում հնչեղ է արտասանվում, իսկ հարավային բարբառում՝ մեղմ ու հանդարտ. բարբառները պեք է ներառվեին և ունենային համընդհանուր ուղղագրություն: Մեր օրերում էյչով լեզուն պաշտոնական է, դասավանդվում է դպրոցներում և կիրառվում լրատվամիջոցներում:

Ո՞րն է ապստամբության կայուն բարոյական արժեքը,
հեղափոխությունն ու արկածախնդրությունը
գրականության համար: Ողբերգություն⁹, թե՞
կատակերգություն կնախընտրեք:
Ի՞նչ է գրված *Voprosi Literaturi*⁹ կամ *Tel Quel*¹⁰
ամսագրերի լուսանցքներում
բասկ բանտարկյալների անվերջ հացադուլների մասին:
Ի՞նչ նշանակություն ունի ձերբակալումը
նոստիկանի գնդակներից փախչող Անպաշտպան
տղայի համար.
գուցե նա էր հեղափոխության դրոշը...

9. *Voprosi Literaturi* – ռուսական գրականագիտական հանդես, որը
լույս էր տեսնում Մոսկվայում:

10. *Tel Quel* – ավանգարդ գրական ամսագիր, որը հրատարակվում
էր Փարիզում 1958-1982 թվականներին:

ՉՈՐՍ ՀԻՆԳ ՎԵՑ ՔԱՐԵ ՊԱՏ

Չորս, հինգ, վեց քարե պատ շուրջանակի՝
ասես մի սիրտը մյուսի մեջ:
Ուրախ երգ հրահրող անձրևը
խորտակվել է ինչ-որ հին լճում:
Քամին ոչինչ չի բերում: Նայիր՝ թռչունների
թաքնված ստվերներ կան գետնին:
Ի՞նչ կարող ենք անել: Ջրոսնեք մի քիչ՝ մոխիր թողնելով
յուրաքանչյուր ոտնահետքում.
աշխարհը նույնպես շրջում է մեզ պես՝ անկարող
գտնելու իր իսկ նշանակության բանալին:

ԵՐԿՐՈՐԳ ՀԱՐՑ

Բանտարկյալն իր խցի մի անկյունում
կարծես ինքն իր հետ խոսում է:

Բայց ոչ, նա դիմում է սարդին.

«Մինչեւ ե՞րբ»:

Սարդն անմիջապես կախվում է

ոստայնաթելից և սկսում իջնել

իր ճկուն ու ձիգ թելով,

որն ավելի ու ավելի էր երկարանում:

Թվում է՝ սարդի պատասխանը հենց

այդ անվերջ երկարացող թելն է:

ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑ

Քամին ներս է մտնում պատուհանի
ճեղքից:
Բանտարկյալի ժամացույցը, բանտում
լքված, կանգ է առել:
Որքա՞ն դանդաղ է անցնում ժամանակը:
Պատուհանից կախված
մի թել քանու հետ վեր ու
վար է անում:
Բանտարկյալը հարցնում է՝ արդյո՞ք
նա գիտե ժամը:
Թե՛լը վեր ու վար է շարժվում, ասես
ասում է՝ այո, գիտեմ, այո, գիտեմ:

Մինչև ե՞րբ է ժամանակն այդքան անվերջ մնալու:
Մեր մարմինները միս ու արյուն երբեւէ
կունենա՞ն կրկին:

Մեր մատներն այլևս ուժ չունեն, խիտ ամպամած է
մեր աչքերում:
Կարող ենք լույ թողնել տխուր ու անշուք երգեր
եկողների համար,
Բայց ոչ երբեք՝ վախկոտության դասեր:

ՄԻ ՉԵՌՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԳՈՒ ՉԵՌՔԸ

Դռներ՝ մեր առջև բացող տարածքներ,
դռներ՝ դրանք արգելափակող,
գիշերներ՝ կարոտով հիշող ցերեկվան,
ցերեկներ՝ կարոտով հիշող գիշերվան,
չկերած հաց՝ բորբոսնած մոռացության մատնված
սեղանի վրա:
Մեր երկիրը երկիր է՝ տեղ չգտած աշխարհագրության
ոչ մի գրքում,
մի խոր վիրապ, որի մեջ ենք ընկել,
վիրապ, որ կուլ է տալիս մեզ,
մեզ չտրված համբույրը խեղդվում է մեր չտված
համբույրների խոր լճում,
մեր ասած՝ խաղողի հատիկների չափ բառերը նույնքան
դառն են, որքան մեր չասած բառերը,
վստահությունը, որ մենք չունենք, մեր կյանքի միակ
վստահությունն է:
Բոլոր կոչերը, բոլոր ցանկությունները,
բոլոր տառապանքները
նման են մի ձեռք ունեցող մարդու ձեռքին:

FIRĀQ¹

Ես չեմ պատրաստվում քեզ ասել, որ քո ձայնը
արշալույսի հոտ է բուրում,
ոչ էլ այն, որ դու նման ես անապատի միջով անցնող
կենսաբեր գետի:

Ես չեմ պատրաստվում ասել, որ ունես
վիթի աչքերի պես պայծառ աչքեր,
ոչ էլ այն, որ քո մազերն ավելի փափուկ են, քան
կեսօրին փչող գեփյուռը:

Ես չեմ պատրաստվում ասել, որ մարմինդ ունի
Արևելքի լեռների
լանջերի հանգստությունը,

քանզի դա ճիշտ չէ.

Քո մարմինը շատ սովորական մարմին է,

բայց,

երբ դու բացակայում ես, ես հիվանդանում եմ

մալարիայով:

(Մուհամեդ Ալ-Քալի)

1. Firaq – արաբերեն բառ, որը նշանակում է «բաժանում», արաբական պոեզիայում վերաբերում է սիրելիի բացակայությանը: Բանասիրեղծությունը հրատարակվել է համաշխարհային պոեզիայի անթոլոգիայում (կոչվում է Izkiraturik aurkitu ditudan neure poemak՝ «Իմ բանասիրեղծությունները, որոնք ես արդեն գրված եմ գրել») և վերագրվում է Մուհամեդ Ալ-Քալիին, որը, հավանաբար, հենց Խոսեփա Սարիոնանդիայի գրական կեղծանունն է:

ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԽԱՂ

Ամբողջ արագությամբ նավաքիթը կտրել-անցնում է
ճնշող ծովը, նավաստիները մեծ
առագաստի մոտ են:
Հանկարծ վերնակայմից լսվում է նախազգուշացման
կանչ մոտեցող հսկայական ալիքների մասին:
Դեկանվին կանգնած սպան դադարում է
գրառումներ կատարել գրանցամատյանում
և ձեռքն է առնում դեկը,
քանզի ահռելի մի ալիք գալիս է ուղիղ դեպի իրենց:
Ճռռացնելով նավի իրանը,
բացում է ողնուցը, և նավը, գտնվելով ալիքների ներքո,
այս ու այն կողմ է շարտվում և շրջվում:
Հենց այդ ժամանակ հսկայական մի ձեռք
բարձրացնում է նավը
և օդում պահելով՝ թափահարում, ջրագերծում այն:

«Փոթորիկը հարվածել է ողջ անձնակազմին», - ասում է
մի երեխա՝ ձեռքին պահելով
ամբողջովին թրջված թղթե նավակը,
և աչքերի թարթումով՝ «Եկեք տեսնենք՝ կարո՞ղ ենք
գտնել նավի մատյանը», -
ասում է տղան.

ես ինքս, փոքր ժամանակ, խաղում էի ծովափին
ավազե ամրոցներով ու քղթից պատրաստված
նավակներով:

Եվ լողափի երկայնքով փնտրում էի գրանցամատյան
ու թուղթ՝ նոր նավակ պատրաստելու համար...
Նավաստիներ՞, նավա՞կ, ալիքներ՞, երեխա՞, խա՞ղ:
Այստեղ և հիմա.

սպիտակ թուղթ՝ առանց ծալքերի,

Կապույտ գրիչ, իմ ձեռքը, թանաքի բծեր,
ոչ ծով, ոչ մանկություն:

ԱՉԱՏ ՏԱՐԱԾՔ

Բանտի պահակների աչքերն անընդհատ մեզ վրա են.
նրանք մեզ հետևում են բակի անկյուններից,
նրանք գալիս են մեր հետևից,

երբ զուգարան ենք մտնում,
նրանք առաջնորդում են մեզ այցելողներին,
նրանք մեզ դիտում են խցում դռան անցքից,
նույնիսկ ուշադիր ուսումնասիրում մեր քունը:
Մենք չենք կարող ազատվել նրանցից
ոչ բակում, ոչ լվացարանում, ոչ այցելությունների
պահին,

ոչ էլ նույնիսկ յոթերորդ երազում:
Բասկերենն է

մեր միակ ազատ տարածքը...

Երբ սկսում ենք բասկերեն խոսել¹
մի պահակ ծածուկ հետևում է մեզ,
փորձում ենք թաքնվել, երբ մոտենում է:
Նա, իհարկե, ոչինչ էլ չի հասկանում,
բայց պետք է խաղա գործակալի դեր,
ինչպես դետեկտիվ ֆիլմերում է լինում:
Ինչևէ, մենք չէինք պատրաստվում բնավ
մայրենի լեզվի դասեր տալ նրան:
Մեզնից մեկը պատահաբար ասում է.
*"Ereht si a gnikuf draug thgir dniheb su,
'stel ees fi ew nac tup mih no"*²

1. *Բասկ քաղբանդարկյալներին սովորաբար փեղափոխում էին (Բապանիայում և Ֆրանսիայում) Բասկերի Երկրից հեռու գտնվող խիստ ռեժիմի բանտեր: Պահակները, որոնք կա՛մ իսպանացիներ էին, կա՛մ ֆրանսիացիներ, նրանց հարկադրաբար աշխատեցնում էին:*

2. *"Ereht si a gnikuf draug thgir dniheb su, 'stel ees fi ew nac tup mih no" – բասկերեն՝ «Մեր հետևում ծախու պահակ կա, փեսներնք՝ կարո՞ղ ենք հազցնել նրան»:*

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՍ

Հյուսիսում գտնվող հին նավահանգիստը
ընծայենք երզին.
թաց փողոցի զգացողություն, ապակե գավաթների
շխկշխկոց:

Օտար լեզուներով խոսող նավաստիների մեջ
հանդուրժողաբար սողոսկեց ջինը.
մերկ գիշերը սահեց մեր լայնացած
աչքերի բիբերով:

Լքված կեսգիշերին, աստղերի
համր լույսի ներքո
դանակները կտրատում էին օդը.
արյունը թափվում էր գետնին:

Մենք այն գնել էինք նոր մետաղադրամներով
և խաղացել սիրո վրա.
մենք պատկում էինք նեղ մահճակալներում՝
ծովի աղախինների գրկում կծկված:

Անառակ երգերից ստացած հրճվանք,
ակորդեոնների տխրահունչ մեղեդի.
ավա՛ղ, մենք այլևս չենք կարող վերադառնալ
հիշողության նավահանգիստ:

ՄԵՐ ԱԶՔԵՐԸ

*...la charrette de Biscaye, à deux boeufs à deux
roues pleines qui tournent avec l'essieu dans et font un
bruit effroyable qu'on entend d'un lieu dans la montagne¹.
Վիկտոր Հյուգո*

Մեր աչքերը տրամադրություն չունեն լացելու,
քանզի սա է նրանց միակ ու եզակի կյանքը:

Լսիր, ժամանակն

անցնում է դանդաղ, ինչպես եզներն են քաշում

ծանր սայլը:

Նայիր ժամացույցների ժանգոտած սլաքներին:

Այս յուրահատուկ կյանքում այնքան բան ենք թողել
ճամփեզրին կամ կապտամոխրագույն լճերի խորքում,
իսկ որքան ժամանակ ենք կորցրել մշուշների մեջ
ճնճուկների հետ, որոնք երազում են լինել փնթփնթան:
Մեր ցանկություններն այժմ ոչ այլ ինչ են, քան լքված
բներ մեր սրտերում: Արևը հագիվ նշմարվող անիվ է:

Մի՛ լսիր, մի՛ նայիր, մի՛ մտածիր այլևս, քանի որ

կյանքն այս

մի անգամ է տրված: Ուրեմն, այն բաց չթողնելու համար,
ոչ քայլի՛ր, ոչ զգա՛, արի՛ լինենք քարեր այնտեղ,
որտեղ հանդիպում են դարն ու ակնթարթը,
դառնանք մի բիծ այն երկրում, որ կոչվում է հեռու:

¹ /Ֆրանս./- ... Բիսկայան սայլը երկու եզով ու երկու ամուր
անիվներով, որ պտտվում են իրենց առնու հետը՝ սարսափելի աղմուկ
ծնելով, լսվում է հեռու լեռներում:

ՄԵԿ ԱՅԼ ԱՇԽԱՐՀ

Ավելի լավ է մի անգամ ևս պտտեն բանալին,
որ ոչ ոք չկարողանա մտնել:
Ես կկեղտոտեմ նաև դիտանցքը,
որ ոչ ոք չկարողանա նաև ներս նայել:
Ես կցանկանայի թաքնվել ստվերում, լինել ստվերը
ստվերի, ոչնչություն:

Կարող եմ լինել այլ աշխարհներ, սակայն
ոչ այս մեկը:
Կփորձեմ ոչնչից ստեղծել ցանկալի
մեկ ուրիշը:

Բանտի պահակները կգան ինձ փնտրելու՝
ձեռքներին բանալիներ ու ծանր դագանակ,
ինձ կփնտրեն ստրկահաճ աչքերով, սակայն
չեն գտնի իմ խցում:
Այս էջի արտահայտությունները պետք է լինեին
քարքարոտ ափը քողարկող մեզի պես...

Ես մի օր կստեղծեմ մեկ այլ աշխարհ՝
անորսալի, ինչպես եթերային քաղաք:

ԱՇԽԱՐՀԻ ԴՅՈՒՐԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

*Ես ունեմ միայն երկու ձեռք և
աշխարհի զգայունությունը:
Կառլոս Դրումոնդ դե Անդրադե*

Դու՝ զգալու ուժ, դու տարածություն չես
սահմանազատված տարածության մեջ,
մեկ է՝ քաղաքում անձրևը թափվում է քեզ վրա,
գարգոյլները¹ ժպտում են ի հեճուկս օրվա,
Ֆադու² կատարողը հյուսում է հիշողություններն իր
բամբակյա թելով, անձրևը ներթափանցում է ճեղքերով,
հնավաճառները տեղափոխում են խանութները,
թռչունները պատսպարվում են փակարաններում,
դեղին տերևները հոգնած չորանում են:
Իսկ անձրևը չի դադարում,
անձրևում է քո թափանցիկության,
նուրբ խոնավության վրա, քո շուրթերին:
Եվ այն ամենն, ինչ համարվում է սրտի տիրույթ,
կծկվում է լճում՝ ժամանակի լճում:

1. Գարգոյլ (ֆր. Gargouille) – գոթական ճարտարապետության մեջ ջրահեռացման քարե կամ մետաղյա ելք, որը հաճախ քանդակագործորեն նախագծված է գրոթեսկային կերպարի տեսքով:

2. Ֆադու (լատ. fatum - ճակարագիր) – ավանդական պորտուգալական երաժշտության հատուկ ոճ, որում զգացմունքային առումով գերակշռում է միայնության, կարոտաբաղձության, տխրության և սիրային կարոտի զգացումների քարդ համադրումը:

ԱՅՆ ԱՄԵՆՆ, ԻՆՉ ՈՒՆԵՄ

Սա իմ տունն է, սա
իմ աթոռը, սա իմ մահճակալը,
սա այն ամենն է, ինչ ես ունեմ:

Այս մենակությունը, այս լռությունը
իմ միակ ունեցվածքն են:
Շուրջս հազար ժանգոտված ասեղ,

Տեսարան՝ առանց պատուհանների,
ցավագին ապտակ ուղիղ սրտին,
ահա այն ամենն, ինչ ես ունեմ:

Կարո՞ղ եմ կարծել, որ մեռած եմ:
Մի օր դու՞րս կգամ այս շփոթից,
ինչպես դուրս եկա մորս արգանդից:

Դուռը չի բացվում.
գուցե՞ դամբարանն է նեղ:
Դիտանցքից բանտապետի

թարթող աչքը տեսնելիս
զիտակցում եմ, որ ողջ եմ:

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԳԵՐԻ

Միայնակ պաղեստինցի բանտարկյալը
միշտ իր հետ կրում է իր ռադիոն,
այսպես նա գոնե կարողանում է լսել
հեռավորության ձայնը:
Նա թափառում է արևոտ բակում՝
քառակուսու վրա շրջաններ անելով,
և լսում է՝ ինչպես է քամին
ականջին հասցնում
իր ծննդավայրի շատրվանների ձայնը.
բանտում ջուր են տալիս
օրական ընդամենը երկու անգամ,
իսկ բանտարկյալը ծարավ է:
Տոթ օրերին նա կարողանում է բռնել
ավելի շատ ռադիոալիքներ,
երակները նրա բազուկներում
լայնացել են, թվում է՝
արյունը նրա մարմնում տեղ չունի,
և երակների պայթյունից ահա
կարմիր ծով կբխի, և միայնակ
պաղեստինցի բանտարկյալը
կսուզվի բոսորագույն
օվկիանոսի մեջ՝
փամփուշտներով ու դիակներով
ծանրաբեռն շոգենավի պես:

ՄՏՐՈՒԿԸ

Արևմուտքի խոնավ անտառներից
քեզ գերեվարած բերեցին Հռոմ, ստրուկ,
քեզ դարբին դարձրին, որ
շղթաներ կռես:
Հնոցից հանած շիկացած երկաթը
ձևափոխում ես՝ ինչպես ուզում ես,
դու կարող ես նաև թրեր պատրաստել,
որ քո ժողովուրդը կարողանա կտրի իր շղթաները,
բայց դու, ստրուկ, որ ստրուկ ես,
շղթաներ պատրաստի՛ր, շատ շղթաներ:

ՄՈՒԹ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Մպիտակ աղավնի, դու պաշտպանում ես
քո գոհունակությունը
դրամարժույթով ու ծանր զենքով:
Դու պաշտպանում ես քո մութ ազատությունը՝
ստիպելով ուրիշներին աշխատել, հետևել սպորտին
ու աղոթել: Դու պաշտպանում ես
քո ծնողների մռայլ տունը,
որ բաց չթողնես օճառային օպերայի
անգամ մի դրվագ: Դու պաշտպանում ես քո
մութ քունն այնպես, որ քաղցր
երազներդ ծնեն քաղցր երազներ:
Դու պաշտպանում ես սրտիդ անդորրը՝
օժանելիքով առատորեն ցայլած մարմնով
և քո հանգստյան օրերով: Դու պաշտպանում ես
քո մութ ու կեղտոտ խաղաղությունն
եւ քո մի սլաք ունեցող ժամացույցը.
մենք տարօրինակ գայլի երեխաներ ենք:
Արդեն ժամանակն է, որ դու ցուցամատով
ազդանշան տաս քո ոստիկաններին՝
զնդակահարեն մեզ:

ՄԻՐՈ ՊՐՈՏՈՊՈՆԵՄ

Ես կցանկանայի քեզ համար գրել
ամենաքնքուշ սիրո բանաստեղծությունը
ամենառոմանտիկ բանաստեղծի
ազնվությամբ ու անմեղությամբ.

Եթե քո ոտքերը երկար լինեին,
իմն էլ լինեին քո ոտքերի պես,
մենք սեղանի տակ դրանք
միահյուսելով՝ խաղ կխաղայինք:

Եթե իմ մատները դիպչեին քեզ, նրանք
կբոցավառվեին լուցկու պես:
Մենք մեր գրկախառնությամբ գուցե աշխարհը
լուրջ վտանգեինք՝
ցնցելով այն, ով գիտի՝

ինչպիսի ուժգնությամբ՝ Ռիխտերի սանդղակով:
Արի և բարձրացիր պատն ի վեր՝ ինչպես բաղեղը,
արի, բախվիր այնպես, ինչպես ալիքներն են բախվում
նավի տախտակամածին:

Արի, ինչպես փոթորիկն է գալիս խեղդելու
չորացած հողը:

Արի, արի բառերը դարձնենք մարմին:
Եթե միայն միաձուլվե՞նք մեկս մյուսին:

Ահա ինչպիսին կլիներ քեզ ձոնած
բանաստեղծությունը,
չնայած բառերն այդքան էլ համարժեք չեն:
Պատուհանը բացում եմ, և քո փոխարեն
իրականությունն է ներս մտնում
իմ խուց՝ իր ամուր պողպատե, ճանկռող ճանկերով:

**ՀՈԳ ՏԱՐ ՔՈ ՄԱՍԻՆ,
ՀՆԱԶԱՆ Դ ՅԱՀՈՒ**

*Կյանքը արտոյ է:
Վրկպոր Հյուգո*

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԳՐԵԼ ԿԻՏՐՈՆԱԶՐՈՎ

Ինձ դուր է գալիս քայլել մարգագետինների
այս արահետով՝
վայելելով դաշտի կանաչ խոտը,
կեսօրվա արևից ջերմացած
կապտավուն քարերն ու անտառի
թաքստոցները՝
հստակ, ինչպես քամու
շշուկը,
երբ հորիզոնը շիկնում է հեռվում:

Ինձ դուր են գալիս այդ արահետները, որոնք բացել են
հետիոտներն ու հին սայլեր լծած եզները՝
այնտեղով անցնող հին սայլեր լծած եզներին քշող-
քայլողների համար:

Ինձ դուր է գալիս ուրուրի թռիչքի
բյուրեղյա ազատությունը:

Պտերների խիտ դաշտերի միջով անցնող
ոլորաններում

բացվում են այլ արահետներ,
այլ բնապատկերներով

և, հավանաբար, այլ եղանակով:

Մթնշաղի այս շփոթ պահին
յուրաքանչյուր բնապատկեր ներկայացնում է
բոլոր հնարավոր բնապատկերները,
այս կյանքը բացատրություն է պահանջում
բոլոր հնարավոր կյանքերից,

այս կարմիր արահետներն այնքան իրական են,
որքան ցանկացած մետաֆիզիկա:
Մենք պետք է փայփայենք ապշեցնելու
կարողությունը,
որ բույն է դնում մեր ներսում: Որովհետեւ
այն կկորչի,
եթե կորցնենք մեր կյանքը, որն իրականում
անպայման մի օր մենք կկորցնենք:
Բայց ես սիրում եմ կիտրոնի հյութով¹ գրել այստեղ`
արահետների ողջ երկայնքով:

¹ Կիտրոնի հյութը կարող է օգտագործվել որպես անուեսանելի քանաք սպիտակ թղթի վրա: Չորանալուց հետո, թուղթը տաքացնելով, կարող ես կարդալ թաքնված հաղորդագրությունը:

ՍԱՀՄԱՆ ՀԱՏՈՂՆԵՐԸ

Սահմանամերձ հովիտներով փչում է
հարավային քամին,
կռունկները թռչում են հարավ:
Լեռներում ձյուն չկա, որ խափանի
սահմանահատումը Իսպանիայի...

Մթնշաղին բեռնակիրները ստուգում են իրենց
գույքացուցակը
և, հաջողություն մաղթելով,
ճամփա ընկնում դեպի հարավային սահմանը՝
առանց վերադարձի ամսաթվի,

առանց վստահության, որ կյանքը կշարունակի
իր հունով գնալ:
Որքա՞ն լավ կլիներ ապրել առանց
մաքսանենգության:

Թող վերջին անգամը չլինի, որ տեսնում եմ այս
հրաշագեղ լանդշաֆտները:
Ի՞նչ երջանկություն կլիներ բասկ լինելը,
եթե աշխարհը լիներ Պիեռ Լոթիի¹ գիրքը:

1. Պիեռ Լոթի – ֆրանսիացի նավարորմի սպա և վիպասան ժյուլիեն Վիոյի կեղծանունը: 1897 թ հրատարակված «Գամուռն» վեպում, ինչպես նաև որոշ այլ աշխատություններում, Լոթին Բասկերի երկիրը պարկերել է որպես երջանիկ երկիր, որը պաշտպանված է ժամանակակից կյանքի բիրտ իրականությունից ու դաժանություններից:

ԱՆՎԵՐՁ ԳՆԱՅՔԸ

Մի գնացք կա, որ կայանից
միշտ հեռանում է լուսադեմին:
Մեանորթ մի կին պատուհանից
դուրս է նայում, չի կարողանում սակայն
հրաժեշտ տալ ինչ-որ մեկին.
տեսանելի որևէ մեկին նա չի գտնում:
Կայարանում միշտ կոտրված սիրտ է լինում,
որի կեսը հեռանում է գնացքի հետ,
մյուս կեսը մնում է միշտ ետևում:
Մշուշոտ օր, ամպրոպ ու անձրև,
պատուհանների թրջված ապակիներ,
թրջված կառքեր, թրջված ռելսեր:
Իսկ գնացքը միշտ շարժվում է
դեպի առաջ՝ դեպի դժոխք:

BERETERRETXE¹-Ի ԵՐԳԸ

Ահա ինչպես բնաջնջեցին մեզ,
մենք սպանեցինք միմյանց:
Մենք ընկանք՝ ինչպես հասած խնձորները
կրկնեին ծառից՝
նախընտրելով դիմադրել մինչ արյան
վերջին կաթիլը:
Մայրերը չէին կարող կրկին կայցնել
կոտրված հայելիները:

Գոն Բիլդուրը² դեռ շրջում է գյուղերում՝
սպանված մարդիկ,
ձիերի վրնջոց, մտրակների հարվածներ,
զենքերի շաշյուն:
Թաղամասի սուր աչք, նայիր դեպի վեր՝
դեպի սարալանջ.
մեր սպիտակ կովը արնաքամվում է
խոտերի վրա:

Մի նվազեք ոչ ֆլեյտա, ոչ ալտ, ոչ շեփոր:
Եկեք չարթնացնենք մահացածներին:
Մեր մայրերը չէին կարող կրկին կայցնել
մեր կոտրված հայելիները:

*1. BERETERRETXE – Հին սուլեդիկյան երգ, որում պատմվում է Լե-
րինի կոնսի զորքերի կողմից հասարակ մարդկանց սպանության մա-
սին, XV դարի կեսերին:*

*2. Բիլդուր – Bildur բասկերեն նշանակում է «վախ»: Գոն Բիլդուրը
Գոննալո դե Բերսեռյի ռոմանտիկ բանաստեղծություններում չարի
կամ սարանայի կերպար է /XIII դար/:*

ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾԻ ԽՈՂԵՐԸ

Ձերբակալվածի խոհերը միշտ
վերադառնում են բանտ:
Փողոցում նա կհանդիպի դատավորների,
դատախազների ու փաստաբանների,
և նույնիսկ ոստիկանը, առանց նրան ճանաչելու,
հայացքը կսևեռի
նրա վրա ամբոխի մեջ,
քանզի նրա շարժումները
ծանրակշիռ չէ կամ չափազանց
ծանրակշիռ է:
Մյուսի խորքում նա կրում է հավիտյան
դատապարտվածի էությունը:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես ծեր գնչուհին գուշակություն արեց
տղայի շեռքի ափին*

Տո՛ւր ինձ աջ ձեռքդ,
չենք կծելու քեզ,
դե, մեկնի՛ր ձեռեռքդ,
բացի՛ր բռունցքդ
և պաասարգի՛ր մատներդ,
մի՛ վախեցի՛ր,
արի տեսնենք՝ ինչպես ես անցնում
քո կյանքի ուղին.
դու ունես հստակ գծեր–
ես կասեի, թեկուզ
տեսնում եմ աղոտ, բայց
չգիտեմ, չգիտեմ,
ինձ ամենևին դուր չի գալիս, էէէ.
քայլում ես կրակոցների միջով,
ես մեծ ցավ եմ տեսնում, որ փարված է քեզ
հեռավոր վայրերում,
սա ինձ պարզապես դուր չի գալիս,
տես, թե որտեղ ես՝ բանտում,
ինչի՞ մեջ ես ընկել, խեղճ տղա,
բոլոր հարազատներդ հեռու են,
բոլոր հաճույքներդ՝ կարճատև,
ընկերներիցդ ոմանք

մեռած են, Աստված իմ,
քեզ միշտ տեսնում եմ գլուխդ կախ,
այդ ի՞նչ ես ցանել, որ հնձում ես
այսքան տառապանք:
Դեռ ավելին կարող եմ ասել՝
վատը գնալով կվատթարանա,
չգիտես ինչու, ես քեզ տեսնում եմ
քիչ անճարակ, բայց
բավականին պատասխանատու
ու պատվավոր,
մարդիկ սիրում են քեզ, բայց դա կապ չունի,
դու կտանջվես չափազանց շատ,
պետք է, որ լինի խորը պատճառ
այստեղ... ինչու՝ չեմ կարողանում գտնել,
տեսնում եմ՝ կառավարությունը քեզ վրա նստած է
ինչպես մի տոննա աղյուս,
ոստիկանությունը դատում է բանկիրներին,
բոլորը քո դեմ են,
որն է քո ճակատագրական սխալը՝
կտեսնենք հիմա,
իսկ դու որտեղի՞ց ես,
աաաաաահ, իհարկե,
դու բասկ ես, ահա թե ինչ է տեղի ունենում
բասկյան հողերում ծնված մեկի հետ՝
հանց Սահարայում ծնված,
հանց հնդիկ ծնված
կամ սևամորթ, ես չէի ցանկանա
լինել քո փոխարեն:

Երբեք չքննս,

միշտ արթուն մնա՛,
եթե նույնիսկ առաջ գնաս առանց հանգստի,
թույլ չտաս, որ քեզ հանկարծ բռնեն,
քանի որ նրանք քեզ կսպանեն
տեղում.

այս պահին, դու ամենաքիչն ես սրան սպասում,
դու հասկանում ես,
բայց սա այն ամենն է, ինչ ես տեսնում եմ քո ափի մեջ;
ընդամենը երկու հարյուր պեսետ.
բավական էժան՝ համեմատած
այսօրվա գների հետ, էէէէհ,
գումար գոյատևելու համար:

Oh, սպասիր,
ես քեզ զեղչ կանեմ,
որ չհեռանաս այդքան տխուր,
ես քեզ տաք սուրճ կհյուրասիրեմ,
որ փողոց դուրս գաս,
գոնե տաք փորով քայլես
անձրևի տակ,
բայց ուշադիր եղի՛ր,
որովհետև
մեր այս աշխարհում ճշմարտությունը
բավականաչափ խենթացած է:

LINGVAE VASCONUM PRIMITIAE¹

Ես որոշել էի հանդիպել
Բերնարդ Էշեպարեի հետ,
բայց հանդիպեցի նրան
չորս հարյուր տարի ուշացումով:
Ամենազարմանալին այն էր, որ
Բերնարդ Էշեպարեն
ինձ սպասում էր:

Երբ նա ինձ հարցրեց
բասկյան պոեզիա մասին,
ես ասացի նրան, որ բասկերը (քեզ, ընթերցող)
ընդհանրապես պոեզիա չեն կարդում:
Ըստ երևույթին, նրանք դիտում են *ETB*²,
իսկ արձակուրդին զնում
արևադարձային երկրներ:

Իսկ ի՞նչ է *ETB* -ն:

1.Linguae Vasconum Primitiae /լատ./ «Բասկերենի առաջին պրոզաները», հեղինակ՝ Բերնարդ Էշեպարե, հրատարակվել է 1545 թ., բասկերեն առաջին գիրքն է:

2.ETB – Euskal Telebista - բասկերի հեռուստատեսություն:

Ահա և մենք
նույնիսկ հիմա
փորձում ենք պարզել՝ ինչ է *ETB* -ն
խմելով մատուցողուհու
բերած սիդրը

մինչ սպասում էինք Աքսուլարին³:

3. Աքսուլար – Պեղրո Ազերե Ազպիլկուերայի գրական անունը: Նա բոլոր ժամանակների մեծագույն բասկ գրողներից մեկն է, իսկ նրա «Գերո» գիրքը բասկյան գրականության մեջ դասական աշխարհաբյուրաններից է՝ հրատարակված 1643 թ.:

ՎԱՂՈՒՅ ՄՈՌԱՅՎԱԾ ԲԱՆՏԱԽՈՒՅԸ

*...et je n'entendrai plus les verrous
se fermer sur l'éternel reclus¹.*

Ալֆրեդ դը Վինյի

Ես կցանկանայի իմանալ, թե ով է այժմ զբաղեցնում
այն խուցը, որտեղից հեռացել եմ:
Արդյո՞ք նա հասկանում է պատի փոքրիկ գրոթյունը.
«Գնացե՛ք՝ ընկնելու պայքարի հետևից»,
կամ ինչ-որ մեկը կանչու՞մ է նրան
հարևան խուցից
զուգարանի այլաստիկե խողովակով
ինչպես կխտսեխն հեռախոսով:
Բանտի օրերը դեռ անձայր երկա՞ր են, գիշերները՝
ցուրտ, արշալույսները թթված կաթի համո՞վ:
Վերահսկող աչքը հսկու՞մ է նրանց
(surveillir et punir²):

1. «...և ես այլևս չեմ լսի, թե ինչպես են փակվում սողնակները հավերժ բանտարկյալի հետևից»:

2. «surveillir et punir» /ֆրանս./- «խրատել և պատժել»: *Surveillir et punir: Naissance de la Prison (Կարգապահություն և պատիժ. բանտի ծնունդը) փիլիսոփա Միշել Ֆուկոյի գրքի(1975) անվանումն է: Գրքում ներկայացված է ժամանակակից դարաշրջանում Արևմուտքի քրեական համակարգի փոփոխությունների վերլուծությունը: Բանտերը դարձան այն բազմաթիվ միջոցներից մեկը, որով կառավարությունները կարգապահություն հաստատեցին իրենց ժողովրդի մեջ:*

Դիտանցքը տեսնու՞մ է որևէ մեկին կամ ոչ մեկին արդեն
(բոլորը կամ ոչ ոք³):
Կուզենայի իմանալ, որ փախել ենք մենք՝
ճի՞շտ ենք արել

կամ արդյո՞ք փախուստը միայն պատրվակ էր
մնալ այդ խցում:

3. «Բոլորը կամ՝ ոչ ոք» – Միկել Լաբոսյի երգի վերնագիրն է՝ գրված Բերտոլդ Բրեխտի քանասարեղծության հիման վրա, որը սկսվում է. «Ո՞վ է, ո գերի, պատրաստվում քեզ ազատել»:

ՄԱՐՏԻՆ ԼԱՐԱԼԴ¹

Կանաչ դաշտեր, սպիտակ տներ,
կարմրածածկ տանիքներ,
ժանդարմերիայի մեքենան
ճանապարհի հարթելով, առաջ է շարժվում
ոչխարի հոտի միջով:
Աղոթք եկեղեցում
և տանը, մեղմորեն բարձրացող դարավոր
տպավորություններ՝ հանց ծուխ ձմռանը:

Մարտին Լարալդը այլևս տուն չի վերադառնա,
եթե նույնիսկ վերադառնար,
(կգար ոգնու պես, փշերն ուղղած
ներս),
ի՞նչ, եթե նա տուն գար: Այսօր կիրակի է,
կանաչ դաշտեր, սպիտակ տներ,

կարմրածածկ տանիքներ, ժանդարմերիայի մեքենան
անցնում է Բայոննե 17 փողոցով:
Մարդկանց հոծ բազմություն է կուտակվել այստեղ՝
ցույց տալու նողկանքով լեցուն
իրենց հոգիները, ասես

¹ Մարտին Լարալդ – ֆրանսիացի ֆերմեր և բանաստեղծ: Նա հայրնի «Թիավար սրբուկի երգ»-ի հեղինակն է: Ծնվել է Հասպարեն քաղաքում, 1782 թ.: 1809 թվականին նա ցնահ դարասպարդովեց մակույկի թիավար: Մահացել է 1821 թ., Ռոշֆորի ծովային հիվանդանոցում:

ընտանեկան լուսանկար: Ոչ ոք չի արձակում
հիշողության

(ամեն ինչ սովորություն է, ամեն ինչ մեղք է,
ամեն ինչ թողություն)
հանգույցները

և, իրոք, ոչ ոք կարիք չունի
տաղաչափ գրողի:
Մարտին Լարալդը մահացավ այսպիսի մի օր՝
որպես կամբուզի² թշվառ ստրուկ,

լայն բացված աչքերով՝ փոված գետնին,
ասես ակնարկում էր՝
երկինքը կեղտոտ մի ծով է միայն:

2. կամբուզ /նորչ./– խոհանոց նավի վրա

ԳԻՏԵ՞Ք ԻՆՉ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես ականատեսն էի
քո ներկայացման,
Ես տեսա կարծր ճարտարապետությունն ու
նրբագեղությունը
քո դատարանի,
Ես շնչեցի և գրեթե շնչահեղձ եղա
այդ նորդասական մթնոլորտից,
Ես տեսա սև թիկնոցներն արծաթագոծ
ծայրերով,
որ դուք հագնում եք, դատարանի դրամատուրգներ,
ես հուզված էի
քո արճճե թղթերի քաշի
ճնշող ծանրությունից:
Ես քերականորեն վերլուծեցեի
այն հնացած ու ուսանելի լեզուն,
որ դու օգտագործում էիր
քո դատի ժամանակ,
շնչելով ձեր դատարաններում`
ես զգացի, որ
այդտեղի փոշին ավելի նուրբ է, քան
քո հոնքերի վրա կուտակվածը,
ես ծիծաղեցի արիստոտելյան տրամաբանությամբ
դատելու
քո պահանջկոտության վրա
ատելության պատճառով. ես տառապեցի
անձուկ խցում`

սպասելով ընթացակարգային ձգձգումներին,
ես հաշվարկել եմ
քո արխիվի ավերածությունների
մեջ կուտակված փաստաթղթերի
անսահման վերարտադրությունը,
այնպես որ, քո սուրբ պարտավորությունն ես
համարել՝ ինձ դատել....

Ամեն ինչ կանեմ քո թակարդի մեջ երբևէ
չընկնելու համար:

ՄՆԱԼՈՒ ՈՒ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մնա՞նք թե գնա՞նք: Հիմա գնու՞մ ենք,
թե՞ մնու՞մ ենք:
Իրոք, երբ մնում ենք, արդյո՞ք քիչ
անց չենք գնում:

Եվ երբ գնում ենք, մի՞թե մենք մաս
հետ չենք մնում:
Հիմա մնո՞ւմ ենք, թե՞ գնում ենք:
Թե՞ դեռ գալիս ենք այստեղ:

Իսկ երբ հասնենք այնտեղ, պետք է վերադառնա՞լ,
թե՞ առաջ գնալ:
Երբ այնտեղից եկանք, մնացի՞նք այնտեղ:
Երբ մնում ենք այստեղ,

արդյո՞ք միշտ ենք մնում այստեղ: Երբ գնանք
այստեղից,
կվերադառնա՞նք կրկին այնտեղ:
Հեռանալը մի՞շտ է նշանակում վերադառնալ:
Մենք երբևէ
կվերադառնա՞նք մի վայր, որտեղ երբեք չենք եղել:

Եվ ի՞նչ կլինի, եթե վերադառնալը միայն նշանակեր
առաջ գնալ:

Մնացողը կարող է մտածել, որ ինքն ընդմիջտ է
մնում:

Արդյո՞ք իսկապես անհրաժեշտ է մեկնել, իսկ անհնար
ժամանման դեպքում մնալ ցանկացածդ տեղը:
Մեկնողն իրո՞ք կմնա
ինչ-որ տեղ,

թե՞ կվերադառնա: Բայց իսկապե՞ս վերադառնողը
հետ է գալիս այն վայրը, որտեղից նա մեկնել է:

ԴԱՍԱԼԻՔԻ ՈՒՂԵԲԵՈՒՐ

Մտացածին դրախտից վտարված, փախած
իսկական դժոխքից՝
մենք մեզ հետ տանում ենք մեր հուրը:
Մինչ իշխանությունը հրաման կտա
մեզ կենդանի կամ մեռած գտնել,
մեր ընկերները պատսպարում են մեզ:

Սպասում ենք նորությունների մեր ծննդավայրից.
ռադիոն ոչինչ չի հաղորդում,
պապիկս վաղուց է մահացել՝ ամռան մի օր,
ն՞վ գիտի՝ տատիկս դեռ ո՞ղջ է, թե՞ ոչ:
Ուղեբեռը, որ զննել են մաքսատների տասնյակ
տեսուչներ, թողել ենք մահճակալի տակ,

իսկ մենք պատուհանի մոտ նստած՝ նայում ենք
դրսում տեղացող ձյանը:
Մի նոր արտահայտություն էլ սովորեցինք. դեռ մեզ
մատնացույց են անում՝ «Նա օտարերկրացի է»:
Գուցե երբեք չվերադառնայինք այդտեղ,
որտեղ թվում էր, թե կարող էինք,

որտեղ ուզում էինք վերադառնալ, քանզի
ոչ միայն մեր ծննդավայրը
փոխված կլիներ, մենք՝ նույնպես,
տնանկի անհամբերությամբ:

Նույնիսկ խոսքն է հալչում, երբ ընկնում է շուրթերից՝
ինչպես ձյունը հալչող...

Պատուհանից դուրս ենք նայում՝ ձյունը
ծածկում է ամեն արահետ,
ձյունը ծածկում է ձյանը, միայն մարդկային
ստվերներ կան ձյան վրա:
Եթե փախուստը դառնա հրատապ, այս տունն ունի
մեկ դուռ և երեք պատուհան:

ԺԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մի՛ ուշացեք ժամադրության ձեր նշանակած
 ժամից ու վայրից:
Մենք ապրում ենք մենության մեջ՝ միայնակ ու
 մեկուսացված, խոցված,
շրջափակված; հանդիպելը վտանգավոր է այստեղ,
 նույնիսկ փողոցի անկյունում խոսելը,
չորս թոպեն ևս ահագին ռիսկային է,
 բայց, այցելե՛ք:
Մա հանդիպում չէ, սա ընդամենը տեսակցություն է
 իմանալու համար՝ դեռ կենդանի՞ ենք:
Հայտնվի՛ր հենց հիմա, այս ուրվական պահին,
 ստույգ ժամին,
ես չեմ ուզում, որ քո բացակայությունը
 տեսանելի դառնա,
մի թող, որ ես կրկին ու վերստին ստուգեմ ժամը,
 կարծես թե ժայռից ցած եմ նայում:

Եթե դու այսօր չհայտնվես, ես քեզ կսպասեմ վաղը,
 հաջորդ օրը, ցանկացած անհնարին խաչմերուկում:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՆԱՅՔՆԵՐ՝ ԵՐԿԱՐ ՈՒ ԹԱՅ

Երկար ու թաց գիշերային գնացքներն անցնում են
կայարանից կայարան
առանց հեռավորության և ժամանակի չափման՝
Էսլանդ, Օսինբուրգ, Հիրաբիանեն... Անձրև է գալիս և,
մինչ մեքենավարը քնում է,
երկրորդ վագոնում թաքնված ուղևորը թրջվում է՝
չկարողանալով փակել պատուհանը,
խոտը, փղոսկրը, խնձորի ու փոստի պայուսակները
նույնպես թրջվում են բեռնատար վագոններում:
Ամալի տարածքներն ու աքտրավայրը կանաչ
խոտի պես աճում են ուղևորի գլխում,
երբ անցնում է մշուշապատ քաղաքով:
Ասում են՝ քաղաքները
ճանաչելի են նաև իրենց թերթերի հոտով,
խանութպաններն ասում են՝ թեթևաբարո կանաչք
ապրում են մոտակայքում:
*Je vnm zima? Ano je mi zima.*¹ Ասես ֆիլմի հատված
լիներ՝ պատկերված
անձրևոտ պատուհանից այն կողմ.
առանց հաշվի առնելու ռազմավարությունից
բխող արյունը,
առանց հաղթանակի հպարտության կամ
պարտության հուսահատության

¹ *Je vnm zima? Ano je mi zima.* /չեխ./ – «Մրսու՞մ ես: -Այո, մրսում եմ»:

բանակն անցնում է հարթավայրերով՝ տարածելով
 սոցիալական հեղափոխության պաստառները:
 Մառախուղ կայարանում, ապա մարդկային աչքերով
 շներ և շների մենությանը ու տխրությանը մարդիկ:
Jak se mnte? Dekuju nnm se velmi dobr. ² Կան մարդիկ,
 ովքեր ցանկանում են զրուցել,
 և մարդիկ, ովքեր նախընտրում են մենակ մնալ:
 Յուրաքանչյուր գնացքում կա թաքնված ուղևոր
 կեղծ անձնագրով,
 կեղծ ակնոցներով, փիլիսոփայական փքուն գրքով,
 և նա նյարդայնանում է,
 երբ գնացքն արգելակում է
 կամ որևէ դուռ է բացվում...
Kdo jste? Kam jdete? Jak se jmenujete? ³ «Եթե միայն
 իմանայի՞ր՝ ո՞ր ես գնում»,
 «Թեկուզ իմանալն էլ անարժեք է»:
 Կամուրջների վրա զույգերը փաթաթվել են իրար՝
 երևակայական սիրո մեջ տարված.
 օ՛, քնքուշ ու դժվար սեր, նրանց համար,
 ովքեր չգիտեն՝ ինչպես սիրել և լինել սիրված:
 Ճաշացանկ՝ միս, թաց ու քաղցր խնձոր
 ընթրիքի համար, հետո սև սուրճ:
 Ուղեկցորդը գալիս է և հարցնում.
 «Ո՞ր ես ուզում գնալ»,
 և պատասխանը գրառում է փոքրիկ նոթատետրում:

2. *Jak se mnte? Dekuju nnm se velmi dobr.* /չեխ./ – «Բնչպե՞ս ես: -
 Շար ուրախ եմ»:

3. *Kdo jste? Kam jdete? Jak se jmenujete?* /չեխ./ – «Ո՞վ ես դու: Ո՞ր
 ես գնում: Ի՞նչ է քո անունը»:

Խոսեք ա ՍԱՐԻՈՆԱՆԳԻԱ

Կյանքը գնացք է, ժամանակը՝ երկաթուղի,
իսկ գնացքը չունի տունդարձի ճամփա:

Օրերն ու կայարանները կորչում են իրար մեջ. ահա՛
ինչպես է շրջանցիկ անցնում
գնացքով չճամփորդող մարդկանց կյանքը:

ԾՈՎԱԳՆԱՅԻ ԿԱՊԱԼՔՆԵՐԸ

*Կա երեք տեսակի մարդ՝
ոչ, մահացած և ծովում գրկվողներ:*

[Վերագրվում է] սկյութական փիլիսոփա Անահարսիսին

ՆԱՎԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Նավ կառուցելու համար, նախ, պետք է
անտառում
ընտրել փայտը՝ ամուր, հարթ, բուրավետ.
սղոցին ու կաղնին առավել հարմար են:
Անհրաժեշտ է նախագծել նավը, այնուհետև գերանով
կառուցել ողնուցը,
հետո ողնուցապահպանակը, ապա կայմն ու
լայնակի հեծանը, և կայմի գույգ անցքերը,
ցռուկը, նավակողանցքն ու նավախելը,
և լավ պտուտակը:

Թող ծովն արթնանա քամուց քշված
ալիքներից:
Այժմ կտրիր պարանները, արձակիր նավը
և թող շարժվի առանց քո վերահսկողության:
Տես, թե ինչպես է այն հեռանում ափից
դեպի նեղ կիրճը,
ինչպես է անցնում իր իսկ տարածությունը,
նույնիսկ չես կարող հասնել նրան:
Ինչպես է ջրի շիթը ճեղքելով՝ անհետանում
արշալույսի խորհրդավոր մշուշի մեջ:

Տես՝ ինչպես է անհետանում՝ հանց նախորդ օրվա
գիշերային երագ:
Բայց նավն ինքնահոս թողնելու փոխարեն
ավելի լավ է, որ դու այն վարես,

կանգնելով այդ լողացող փայտին, քան աննպատակ
կանգնես ծովափի եզրին:
Ծովը, որ թվում է այնքան անմեղ, հլու-հնազանդ,
կարող է հանկարծ ըմբոստանալ,
կարծես ամենն այդ ոմն մեկը կազմակերպում է
նրա ճանապարհին...

Իսկ եթե չլիներ ոչ փայտ, ոչ նավաշինարան,
ոչ էլ ամուր ողնուց,
դու կարող էիր նաև վարել թղթե նավակ,
որ պատրաստում են երեխաները:
Սա նավաշինության մասին էր: Մնացածը կգրանցվի
նավի մատյանում:

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՎԿԻԱՆՈՍՈՎ

Նա մեզնից մեկն էր:
Չոզեֆ Կոնրադ

Եթե միայն մեզ հետ վերցնեի՝ նք Վիդա¹ լողափի նեզրին:
Կարևոր չէ՝ քանի անգամ ենք մենք մահացել,
կամ քանի անգամ ենք սպանել: Արևն արդեն անցել է
ծովի վրայով՝ կարծես այն լիներ երեքնուկի դաշտ
կամ՝ աշխարհի բյուրեղյա իրերն այդտեղ
լիներին նետված:
Հերոսական կյանքի ոչ մի նշան,
բայց նավերը մոտ են, քամին՝ թիկունքում:
«Դեպի ո՞ր ենք ճամփա բռնելու,
Խուան Սերաստիան²»:

1. Վիդա (ֆր.՝ *Ouidah*) - քաղաք Բենինում, գտնվում է երկրի հարավային մասում: Բենինը (նախկինում՝ Դահոմեա) պետություն է Արևմտյան Աֆրիկայում՝ Գվինեական ծոցի ափին: Պորտուգալացիներն այնտեղ XVI դարում կառուցել են Սան Ժուան Բարիչուս դե Աժուդա փոքրիկ ամրոցը: Անգլիացիները, հոլանդացիները և ֆրանսիացիներն այնտեղ նույնպես ամրոցներ են կառուցել իրենց շահերը պաշտպանելու համար: Քաղաքը մեծացել է ի շնորհիվ սրբկավանդաբանության: «Վերադարձ չկա» մոնոմենտը պաշտպաններն այսօր մեզ հիշեցնում են, որ սրբուկներին փարել են ծովափի և վանառել անդրադարձնելու իսաշմերտիկում:

2. Խուան Սերաստիան Էլկանո – ծովագնաց, սրանչնեղ է Մագելանի առաջին շուրջերկրյա ճանապարհորդության ղեկավարությունը (1519-1522), Ֆիլիպինյան կղզիներում՝ նրա սպանությունից հետո: Առաջին մարդը, ով շրջագայել է աշխարհը:

Մենք՝ ձկնորսներս, կգանք ձեզ հետ,
մեր գինու մուգ շշերով,
մեր աղոթքներով, թաքցրած դանակներով՝
մոռանալու համար,
որ մենք ընդամենը ավագի հատիկներ ենք:
Գնանք և Ջատկի տոնին զբոսաշրջիկներ
կլինենք այնտեղ.
մեր հոգիները կվայելեն իրենց լավագույն կիրակին,
մենք գիշերը թաքուն զենք կտանենք նրանց, ովքեր
կպայքարեն լավագույնի համար:

Իսկ ազատ ժամին կգնանք փորձնական
ֆիլմերի դիտման՝
մթության մեջ հյութեղ ու ջերմ համբույրով կխավելու
այն աղջկա հետ, ով պրոլետարական բրոշյուրներ էր
բաժանել ապստամբների թաղամասում:
Կամ մեր խարսխված նավից սևեռուն հայացքներով
կնայենք խորտակված աստղերին,
և կգրուցենք, և կջերմանանք կրակի շուրջը,
որում այրվել էին հերետիկոսները՝

ջանք գործադրելով, որ մենք ընդունենք այս
պատմության դժվարին, տարօրինակ
ու սխալ իմաստը,
մի փոքրիկ անառողջ հույսով՝ չիմանալով, թե ուր են
առաջնորդում այս դեռ շատ մութ փողոցները:
Քանզի մարդն, ինչպես վառած լուցկին, մեռնում է
առանց ինչ-որ արժեքավոր բան թողնելու,
միայն նրա երգերն են տուն վերադառնում
հանց ծեր կրիաներ...

ԼՈՒՐԵՐ ԱՆՀԱՅՏ ԿՂՁԻՆԵՐԻՑ

Իսկ ինչպե՞ս եք բացատրում բառերով՝
ինչ է կատարվում
անտեսանելի և անանուն ծովերում,
անմարդաբնակ կղզիներում,
մաքուր ավազի վրա, *Caleta* խաղողի որթերի տակ,
մանգրովի անտառի ճահճուտներում
կամ կոյուղու խողովակներում:
Մարսափելի պայքար է՞ տեղի ունենում
Փափկամարմին, թավոտնյա խաչափառների
ու ծովային կողինջների միջև:
Դա պայքար է, ասենք,
կյանքի ու մահվան:
Երբ անպաշտպան փորոտանին փնտրում է
դատարկ խեցի և այն չի գտնում,
կամ պետք է անհույս պայքարի,
կամ գոյատևելու համար
պետք է մտնի ծովն ու դառնա կողինջ՝
հեռու իր տնից:
Ծովային կողինջի համար
իր խեցին անփոխարինելի է մաշկի նման:
Ինչպես ասում են՝ պայքար մինչև մահ,
կամ ձեռք բերել խեցի, կամ կորցնել կյանքը:
Հետո միայնակ խեցգետինը կպայքարի
անխեցի ապրելու համար,
հակառակ դեպքում ընդմիջտ կմնա թույլ
ու անպաշտպան:

Ծովային կողինջը ողջ կյանքում նույնպես
պետք է պայքարի.

Եթե՝ ոչ, ապա կկորցնի

իր թաքստոցը, իր մաշկն ու մարմինը:

Իսկ ինչպե՞ս բացատրել խոցելի խեցգետինների
անհամբերությունը:

Ինչպե՞ս հասկանալ ծովային կողինջների սարսափը:

Ի՞նչ ասել պատյանը կիսելու

անհնարինության մասին:

Ի՞նչ ասել ռազմական ընդհարումների մասին,

որոնք շարունակվում են

առանց հաշտության, առանց զինադադարի,

գրեթե անդադար,

այն ժամանակից ի վեր, երբ սկսեցին

կղզիներ ի հայտ գալ երկրի երեսին:

ՄԵՐԼԱՆԳԻ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ

Որոշ նավաստիներ ընդմիջտ մնում են
նավահանգստի մոտակայքում:
Երեկոյան նրանք գինետուն են գնում
և խմում մինչև հարբելը,
նրանց ճակատագիրը ասես զառ լինի՝
երեխայի նետած,
որ հանգիստ չի տալիս նրանց,
ասես թակարդը լինեին ընկած,
տուն վերադառնալու ցանկություն չունեին,
կարծես երբեք տուն չեն ունեցել,
ասես այնտեղից պիտի դուրս գային կեսգիշերին,
երբ աններդաշնակ հաչոցներ են լսվում:
«Մինչ այնտեղ գնալը հաճելի էր անգամ
ամենամութ գիշերը,
իսկ հիմա նույնիսկ ցերեկային մթնոլորտը հաճելի չէ»:
Առավել քան ճիշտ է, որ մարդիկ ավելի շատ
խեղդվում են
բաժակների մեջ, քան ծովերում:
Գինետան պատին քանդակված է մի շիշ՝
ներսում մանրաքանդակ մի ֆրեզատ,
իսկ տախտակամածին՝ սպիտակազգեստ
մարդկային կերպարներ.
«Որքա՛ն գեղեցիկ են նավաստիները
սպիտակ հագուստով»:

Մերլանդի նավահանգստում
այլևս չկան խարսխված նավեր:

ՄԵԾ ՈՒ ՕՏԱՐ Է ԱՇԽԱՐՀԸ

*Կյանքը սանսկրիտ է, որ կարդում են պոնդիկն:
Լու Ռիդ*

ՆԱՍԱԿ-ՊՈՇՁԻԱ

Ռուսեր Օրդորիկային¹

Ոչ մի նամակ, և երկուշաբթին անցավ
բավականին տխուր:
Երեքշաբթի, չորեքշաբթի՝ այդպես էլ չստացա
ոչ մի նորություն:

Հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ,
կիրակի,
ոչ մի նամակ՝ ոչ ցերեկը,
ոչ գիշերը:

Տարեցտարի անցնում է ժամանակը, որ չունի
ոչ սկիզբ և ոչ էլ վերջ:
Ես առաջ քաշեցի որոշ հարցեր, բայց չստացա
ոչ մի պատասխան:

Թռչունները չվում են աշմանը, վերադառնում
գարնանը,
ն^օվ գիտի՝ որքան ճանապարհ են նրանք
կտրում-անցնում:

Չվող թռչունների պես նամակներն էլ են անսպասելի
հասնում:

1. Ռուսեր Օրդորիկա – բասկ երգիչ-երգահան

Անցյալ տարվա հարցերի պատասխաններն
այս տարի ստացա:

Բայց ժամանակներն անցնում են, հարցերը՝
հնանում:

Դրանց պատասխանել են այն ժամանակ,
երբ նամակները հասել էին:

Հիմա ես նոր հարցեր ունեմ, արդյո՞ք արագ թևերի վրա
նրանք կհասնեն:

Եթե հաջողվի, գուցե, նրանք վերադառնան հաջորդ
տարվա եղանակին:

ԱՇԽԱՐՀԸ ՄԵԾ Է ԵՎ ՕՏԱՐ

El mundo es ancho y ajeno¹
«Մեծ և օտար աշխարհում»
Միրո Ալեգրիա

Ես ձեզ չեմ պատմի, թե ինչպես քաղաքից
չորս-հինգ ժամում հասա
լեռան վրա գտնվող դպրոցը՝
կառուցված փայտից ու տերևներից:
Երբ պետք էր արդեն շրջվեի սարի հակառակ կողմը,
դպրոցի մոտով անցնելիս
հետաքրքրությունից կանգ առա, երբ լսեցի
պոռթկուն մի ձայն.
«Աշխարհը մեծ է և օտար», - ասում էր ուսուցիչը՝
ձեռքին բաց մի գիրք:
Ես նրան տեսա կիսաբաց դռնով,
նա կանգնել էր ուղիղ երեխաների մեջ.

¹ *El mundo es ancho y ajeno* /բասկ./ - Միրո Ալեգրիայի «Մեծ և օտար աշխարհում» վեպը անգլերեն լոյս է տեսել «Broad and Alien is the World»՝ «Աշխարհը մեծ է և օտար» վերնագրով: Վեպում նկարագրվում է 1900-ականների սկզբին Պերուի Անդին գյուղում տեղի ունեցած հնդկացիների երկարատև ու դաժան պայքարը՝ պահպանելու իրենց հողերն ու անկախությունը: Ամեն ինչ սկսվում է նրանից, որ նրանք չգիտեն՝ ինչ է կատարվում իրենց լեռնաաշխարհից դուրս. իրավական կեղծիքի, քաղաքական և տնտեսական խարդախության և բացահայտ բռնության միջոցով խոշոր հողատերերը, քաղաքական գործիչներն ու նախկանները փորձում են խլել հնդկացիների հողը և ոչնչացնել նրանց համայնքը:

«Աշխարհը մեծ է և օտար», - կրկնեց նա,
իսկ երեխաները գլուխներն հակած
սկսեցին գրել՝ «Աշխարհը...»
Ուսուցիչը կարդում էր երկարացնելով.
«մեեեծծծ էէ...»
շուրթերից կախված վերջին տառն արտասանելուց
հետո նա ավարտեց միտքը. «...և օ-տ-ա-ր»:
Ապա նայելով երեխաների սևեռուն աչքերին,
խախտելով լռությունը՝
նա կրկնեց՝ ասես ընդգծելով գեղագրության
կարևորությունը:
«Աշ-խար-հը մ-ե-ծ է...» ասաց նա՝ հնչյուններն արձակ
տարածելով,
«և օ-տ-ա-ր»:
Հետո լռեց և նորից անհողողող ձայնով ասաց.
«Աշխարհը մեծ է...»,
և երեխաներն իրենց խզրզած թղթից
բարձրացնելով աչքերը՝ լիաթոք բղավեցին.
«և օտար»:

«ԱՔՍՈՐ» ԲԱՌԻ ՀՆԱՐԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Աքսորը հորիզոնից այն կողմ գտնվող երկիր է,
Աքսորը մահացած տերևներով հագեցած
ճանապարհով զբոսանք է,
Աքսորը կործանարար երթուղիներով անցնող
դարավոր շոքեքարշների կայարաններին նայելն է,
Աքսորը պատի ժամացույցի կողքին հանգստանալն է,
Աքսորը բոլոր դատարկ տուփերն է,
Աքսորը ոչինչ չարդյունահանվող սեւ հանք է,
Աքսորը սանդղավանդակում ապրելն է,
Աքսորն առանց հոգնելու անկողին մտնելն է,
Աքսորն էժանագին կինոթատրոններ գաղտնի գնալն է,
Աքսորն առանց գայլերի ու գայլերով անտառ մտնելն է,
Աքսորն այն թուղթն է, որի վրա մարդիկ գրում են,
Աքսորը որտեղն ու երբն է,
Աքսորը վերքին հարվածող արնալեզի մահակ է,
Աքսորը հարբելն է նավախցում,
Աքսորը նավարկելն է փրփուր-նավակում,
Աքսորն երկրորդ, երրորդ կամ կիրակի օրն է,
Աքսորը կրակոտ գիշեր է,
Աքսորը թաղամաս է առանց փողոցային
լուսավորության,
Աքսորը բրդյա սպիտակեղենում քնելն է,
Աքսորը կույր կնոջ փուչ աչքում թաքնվելն է,
Աքսորը օտար շրթունքներով խոսելն է,
Աքսորը քամի է, որ չի թողնում քարը քարի վրա,

Աքսորը իմաստուն երևալու համար մորուք պահելն է,
Աքսորը կեսգիշերին հրդեհված հյուրանոց է,
Աքսորը դրոշների մեջ առանց զգացմունքի գտնվելն է,
Աքսորն ամեն ինչ դատարկելն է,
Աքսորն ապագայում ու բոլոր ժամանակաձևերում
ապաստան փնտրելն է,
Աքսորը խիղճը սահմանող իրողություն է,
Աքսորը պատմվածքներից դեպի պատմություն
փախչելն է,
Աքսորը փակ դուռն այն կողմից ծեծելն է,
Աքսորը կարծես հաճախ կրկնվող անհեթեթ բառ է,
Աքսորը հեծանվի վթարից մեռնելն է,
Աքսորն այն այգն է, երբ ես ուղղակի վտանգում եմ
կյանքս,
Աքսորը ներքնաձիգի տարածքն է,
Աքսորը կրկին գոյություն ունենալն է, եթե կա կրկին
գոյություն ունեցող բառ,
Աքսորը սրտերի և ամորձիների ամպրոպ է,
Աքսորը մրտո գիշեր է և բրոնզե արևոտ օր,
Աքսորն առանց գործիքի համերգ է, որի ընթացքում
լսում ես ձյան տեղումները,
Աքսորը սավերներ տնկելն է,
Աքսորը շատ պատճառներով դառը սուրճ խմելն է,
Աքսորը զուգարանում թաքնվելն է այն
մտավախությամբ,
որ ինչ-որ մեկը կբացի այն կամ, ընդհանրապես,
ոչ ոք չի բացի:

ՔԱՐԵՐ ԵՎ ԵՐԿՐՆԵՐ¹

Աշխարհում մի անկյուն կա (մենք չենք ընտրում այն
մեր ծնվելուց առաջ),
որ մենք համարում ենք մեր երկիրը: Եվ ամբողջ
աշխարհը մերն է դառնում,
եթե մեր երկիրը մերն է լինում:
Բայց մենք մեր թաց քարերը դնում ենք
ծակ գրպաններում:

Թեև մենք ջանք ենք գործադրել՝ ինչ արել ենք,
միշտ չէ, որ պետք է այնպես անեինք,
մեռյալների թիվն ու հեռավորություններն անվերջ
մեծանում են, և աշխարհը,
որ վեց հազար անգամ մեծ է մեր երկրից,
ճեղքված է սահմանաքարերով:

Եթե սահմանին մաքսավոր Անրի Ռուսոն² հարցնի՝
որտեղից ենք մենք և ուր ենք գնում,

1. Harri eta herri – հնչյունական նմանությունը թույլ է տալիս փոխաբերական հարաբերություններ հաստատել harri «քար» և herri «երկիր» բառերի միջև, մեջբերված է Գաբրիել Արեսուրի սոցիալական պոեզիայից. Harri eta herri (Քար և երկիր, 1964թ), Euskal Harria (Բասկյան քարը, 1968թ) և Harrizko herri hau (Քարի այս երկիրը, 1971թ):

2. Անրի Ռուսո (1844-1910) – ֆրանսիացի ինքնուսուցիչ, պարզունակ արվեստի՝ պրիմիտիվիզմի ներկայացուցիչ: Նա հայտնի էր իր «Լե Դուսանյե – Մաքսավոր» սրեղծագործության շնորհիվ:

մենք նրան ցույց կտանք մեր թաց քարերը, որ
ունենք մեր ծակ գրպաններում.
«Կարո՞ղ եք տեսնել այս քարը, այս խճաքարը.
սա մեր տունն էր...»:

Մենք գոյություն չունեցող երկրի
տեղագիրներ, քարտեզագիրները չենք:
Մեր այսօրվա օրերը լցվում են երեկվա օրերով,
մենք քայլում ենք՝ փնտրելու մեր իսկ ոտքերը:
Հիշու՞մ եք մեր կորցրած այն հինավուրց
հայրենի հողը:

Մենք քարեր ունենք, բայց՝ ոչ երկիր:
Մենք քարեր ունենք
մեր ծակ գրպաններում, և ոչ մի տեղ չենք կառուցի
հավերժական տուն:
Մի՞թե քարերն ավելի գեղեցիկ չեն
պատին շարված:

ՊՈՇՁԻԱՅԻ ԿՈՐՈՒՄՅԱԼ ԳՈՐԾԸ

Իմ երկրի ու ժամանակի բանաստեղծները,
ինչպես և մենք,
հիմա այս կերպ ենք աշխարհին բան ասում,
Ես կուզեի կիսվել ձեզ հետ գեղեցիկ իմաստի
որոնումներով, որ կորցնում են մեր բառերը.
Մենք, հնարավոր է, սխալ աստիճաններով ենք
բարձրացել, հասնելով այստեղ:
Եթե ուշք դարձնենք մեր երկրի տարածքին,
մեր կոպիտ նախնիներին
եւ մոռացության մատնված մեր բարբառին,
կարելի է մտածել, որ մենք ոչ երկիր կունենայինք,
ոչ տարվա եղանակ, ոչ լեզու, ոչ երգ,
եթե ինքներս չստեղծենք դրանք: Իսկ ո՞ւմ սխալն է:
Գուցե՞ մերը համարեինք և,
առանց երկար մտածելու, գործեինք
ինքներս մեր դեմ:
Մենք մեր մենակությունից հզոր ենք, ուստի մտնենք
առօրյա:
Բացենք պատուհաններն ավելի լայն, քան մեր
պատերն են և երգենք մանկական երգեր:
Նետենք դատարկ շշերը, և ծաղիկները, և լուսինը,
և հայելիները, և աչքերը,
և երազները, և աստղերը, և դեկորատիվ սրտերը,
և սիրո մասին բանաստեղծությունները մեկընդմիջտ:
Փայլեցնենք մեր արժեքները, քանի դեռ դրանք չեն
ստիպում փռշտալ:

Քայլ առ քայլ բարձրացնենք մեր ողջամտության
աղտոտված դրոշը:
Եկեք երգենք մանկական երգ
մեր երկրի համար:
Պոեզիան ոչինչ չի ձևափոխում, ոչ ոքի մոլեռանդ
չի դարձնում,
բայց եկեք հարմար բառեր գտնենք
մեր երկրի և մեր ժամանակի հանգույն,
կարողանանք միախառնվել աշխարհին ու դարին
և ժողովրդին:
Պոեզիան հազվադեպ զբաղմունք չէ, այն լեզվի
վերականգման խաղ է հրաշալի,
փնտրում է մտքերը փոխկապակցելու նոր ուղիներ,
անդադար գործ է ի վերջո,
եւ հավատանք՝ մարդկային զբաղմունք է եւ այնքան
պատվաբեր, որքան լիմոնադ պատրաստելը:
Եկեք օրորոցային երգենք մեր երկրի դատարկ
օրորոցի համար:

ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Մենք մեր հողում օտար ենք ծնվել,
դաստիարակվել մի լեզվով, որում բայ չկա:
Ճիշտ ժամանակն է, որ փնտրենք Բասկերի երկիրը
հենց այստեղ, կամ այլուր
և տեսնենք՝ կարո՞ղ ենք, ցնցելով նրան,
դուրս հանել քնից կամրջի տակ:

Մենք կպաշտպանենք Բասկերի երկիրը
ջրհեղեղից
և երաշտից, մենք կպաշտպանենք նրան
դժբախտությունից.
Մենք կգորացնենք նրան զարգացող
քերականության

ու փոխակերպումների ուժով, պռոնոգրաֆիկ
վարժություններով:
Մենք կգերբնակեցնենք Բասկերի երկիրը
բասկերով, կորեացիներով,
սվահիլիներեն խոսող աֆրիկացիներով,
սկանդինավյան շիկահերներով:

Մենք կգովենք Բասկերի երկիրը քնքուշ
անհեթեթությամբ
ու հստակ համառությամբ, քանզի այն գեղեցիկ է
ու նրբազգաց

և մերը: Եվ, ի վերջո, մի օր Բասկ Երկիրը
կհանձնի

Մուրթ Օգաստինի թեստը եւ այլ թեստեր
ճշմարտության/ուչ ճշմարտության մասին,
ուրեմն, Բասկերի երկիրը երբ դառնա իսկական երկիր,
ինչպես այլոք, մենք կմոռանանք առեղծվածը:
Մենք դուրս կգանք մեր մեքենայական վիճակից
և մեր դրոշները կդարձնենք թեյի սրբիչներ,

որպեսզի երկիրն ունենա գոյության առավելությունը
և շահն անգոյության:

ՆԱՍԱԿ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Կնախընտրեի ձեզ նամակ գրել
առանց բառերի.
ամեն ինչ ասված է, և հոգնեցուցիչ է
կրկնելը,
հատկապես, երբ բառերն իրենց նշանակությունից
քիչ են նշանակում.
ասում են՝ նույնիսկ գերմաներեն երկար բառերը
լիովին հստակ չեն:

Ոստիկանները, բանկիրները, գործարարներն ու
քահանաները
ձեզ «ահաբեկիչներ» են անվանում
ու զվարճալի է լսել, որ մեր ժողովուրդը
ձեզ «հերոսներ» է անվանում,
ձեզ, ովքեր ամենևին չեն ընդունում
անասան ենթակայությունը պետությանը,
գրավառուներ, ովքեր կորցրել են իրենց ազատությունը
ազատության համար պայքարում:

Ասում են, որ դուք վեց հարյուրից ավելի եք¹,
և այդ գրոներն ու սփռվածությունը,
և դատապարտման տարիների անվերջությունը
ձեզ տալիս են վերացական պատկեր.

1. Իսպանիայում կամ Ֆրանսիայում բանտարկված ԷՏԷ-ի և բասկյան դիմադրության այլ կազմակերպությունների անդամների թիվը վերջին 30 տարվա ընթացքում փափայկվել է 500-ից 900-ի միջև:

մարդկանց պետք է հիշեցնել, որ դուք ընդհանրապես
վերացականություն չեք,
որքան էլ հեռու լինեք, նույնիսկ եթե ձեր կյանքն
անասելի լինի:

Այստեղ օրը հորիզոնում արնահոսում է
մինչ վերջին կաթիլը,
այն նման է խորը վերքի, ո՞վ գիտի՝ գուցե
անբուժելի:

Ինչպես միշտ, մենք դեռ շրջապատված ենք
վառողով ու ծաղիկներով՝
սահմանազատված լոգիստիկայով ու
փոխաբերությամբ,
Կարլ Մարքսի ու մերկ կնոջ միջև:

Ամեն ոք իր դժվարությունն է առաջ տանում այստեղ,
երբեմն համբույր տալն
ավելի դժվար է, քան թշնամու շտաբում
ռումբ տեղադրելը...

Մեզ պետք է ձեր ազատությունը, որ շարունակենք
դժվար խնդիրները միասին լուծել.
օրինակ, գտնենք մեր երկրի կորած մարմինը:

Մեզ պետք է ձեր ազատությունը, ուստի մենք՝
ազատներս,
ազատ ենք, առնվազն այնքան ազատ, որքան
թույլ է տալիս
մեր մարդկային մարմնին դաջված
երկար ու մուգ շղթաները:

ԱՅԴ ՄԻՆՈՏԱՎՐՈՍԸ

Թա՛ք, թա՛ք, թա՛ք: Մինոտավրոսն էր դուռը թակում:
«Գարեջուր կա՞», - հարցրեց նա ինձ,
մինչ ես կգնայի դեպի սառնարան, ի արդարացումն
իր սովորական այցելության,
հետևիցս նետեց. «Մենք պարզապես չենք կարող
այսքան շատ զբաղվել հոնտորաբանությամբ»:
Երբ ես երկուսիս համար գարեջուր բերեցի և
նստեցինք սեղանի շուրջ, նա ասաց.
«Ես Ձեզ բան կասեմ, որ ոչ ոք երբևէ
նախկինում չի լսել»:
Նա ինձ շամփրեց իր եզան աչքերով
և շարունակեց.
«Մենք այլ հայրենիք չունենք, բացի նրանից
որ կրում ենք ներսում.
մենք կորցրել ենք այն հասարակությունը,
որտեղ ուզում էինք ապրել ու արարել,
և այդ ժամանակից ի վեր մենք չունենք ոչ այն տունը,
որն ունեինք և ոչ էլ այն, որ
ցանկանում էինք ունենալ»:
Մինոտավրոսը մի պահ ուշադիր նայեց
իր սմբակներին.
«Մինչ մենք կհանդիպենք նրան, որ ուզում էինք
գտնել,
մենք ստիպված մի վայրից մյուսը կգնանք
առանց արմատների, ինչպես քամին...

Եթե անգամ վերադառնանք, չենք գնա այն վայրը,
որտեղ մի ժամանակ եղել էինք»:

Մինչ ես կրկին գարեջուր կբերեի,

Մինոտավրոսը շարունակեց.

«Մենք ոչ մի հողի չենք պատկանելու՝ ուղղակի
ոչ մի,

մեր աշխատանքն ամենուր անօգուտ

կլինի,

մենք նույնիսկ չենք պատկանելու մեր իսկ տեսակին,
որքան էլ որ հազարավոր թելեր մեզ այս ու այն կողմ

քաշքշեն՝

պատրանքներով և առանց պատրանքների, մենք
կճամփորդենք նույն ճակատագրական նավի վրա»:

Ես լսում եմ նրան՝ հանց գիտնական, և հանց հիմար,
Առանց մի բառ իսկ արտաբերելու:

«Բարի գալուստն ու հրաժեշտը, ինչուներն ու բայցերը,
հրաշքներն ու լռությունները,

թյուրիմացություններն ու նույնիսկ կապույտ հազը,

հեշտությամբ նախադասություններ են կազմել:

Ինչևէ, մենք ամենուր արտրված կլինենք»:

Նախքան մեկնելը

նա միշտ կանգնում էր և հարցնում. «Հասկանո՞ւմ եք:

Իրո՞ք հասկանում եք»:

Նա խոսում էր հին հունարենով և, չնայած ես

հունարեն չգիտեի,

բայց նրան հիանալի հասկանում էի:

**ՍԵՎ ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ
ՈՉ ԿԱՏԱՐՅԱԼ
ՄԻԱՄՈՒՍԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*En quelque soir, par exemple, que se trouve le
touriste naïf, retiré de nos horreurs économiques;
la main d'un maître anime le clavecin des prés...¹*

Արթյուր Ռեմբո

¹./Ֆր./- «Մի երեկո միամիտ զբոսաշրջիկը, մեկուսացած առօրյա անբնական սարսափներից, լսում է, թե ինչպես է վարպետի ձեռքը վերականգնանացնում մարգագեղիկների կլավեսինը...»

ԴԺՎԱՐ ԺԱՍԱՆԱԿՆԵՐ

Schlechte Zeit für Lyrik¹
Բերթոլդ Բրեխտ

Երբեմն արթնանում եմք և ամենևին
 համոզված չենք լինում՝
որն է ավելի լավ, որը գեղեցիկ և որը ճիշտ,
 և ինչ-որ բանի մասին խոսելուց առաջ
ասում եմք՝ «ինձ թվում է»,
 «կարծում եմ, թե» կամ՝ «ին կարծիքով»:
Թվում է՝ ապրելը շրջնոլիկի մասնագիտություն է,
 Ես մտածում եմ
այն թռչնի նման, որը բազմիցս հարվածում է
պատուհանի ապակուն, ու
նրան թվում է, թե
հասնում է երկինք:
Մենք գրեթե ոչինչ չգիտենք աշխարհի
 կամ կյանքի մասին,
գնալով ոչ մի տեղ կամ այստեղից այնտեղ,
գործնականում ոչինչ չիմանալով,
և, հավանաբար, երբեք էլ չենք
իմանա որևէ բան:
Դժվար ժամանակներ, երբեմն այնքան վատ, որ
երբ մեկը հիշում է անցյալը,

¹.Schlechte Zeit für Lyrik /գերմ./ - Վար ժամանակներ պոեզիայի համար:

ասում է՝ «Երանի այն օրերին»,
և ոչ ոք չգիտի՝ ինչ նկատի ունի նա:
Մենք կենդանի կլինե՞նք վաղն առավոտյան:
Դժվար է կյանքն ապրել այնպիսի
հետաքրքրասիրությամբ ու հույզերով, որոնցով մենք
ֆիլմ ենք դիտում:
Մենք ցանել ենք կասկածի սերմեր և հավաքում ենք
տարակուսանք:
Մեր գրած բառերը գրեթե անմիջապես
այլ իմաստ են ստանում:
Ո՞ւմ սխալն է, կա՞ իրոք մեկը:
Մենք մեր սեփական թշնամիներն ենք:
Օհ, դժվար ժամանակների բանաստեղծներ,
ի՞նչ է պետք անել:
Ի՞նչ ենք մենք պատրաստվում բացել
պոեզիայի փոքրիկ բանալիով:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԽՈՒՉԱՐԿՈՒՆԵՐ,
ԻՆՏԵՐՊՈԼԻ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

Ոստիկանություն, մասնավոր խուզարկուներ,
Ինտերպոլի գաղտնի գործակալներ,
ես ուզում եմ ձեզ ուղղորդել մի շատ կարևոր
առաջադրանքի՝ փնտրել իմ ընկերուհուն:
Նա իմ աշխարհի քարտեզն էր, նա մերկապար էր
պարում միայն ինձ համար,
հագնելով իմ հայացքը՝ գնաց նա ինչ-որ տեղ,
չգիտեմ՝ որտեղ:

Ես կորցրեցի ինձ դուր եկած աղջկան մինչ
ձեռնասահնակ էի քշում,
նա սայթաքել-ընկել էր իմ երազանքների
սահմանից ներս:
Նա՝ այդ փախստականը, ինձ թողեց դատարկ
ու դարձրեց այրի:
Արդյո՞ք նա չի սավառնում հիմա աշխարհի շուրջ
սիրված երգի պես:

Չգիտեմ՝ ինչու նա հետ չեկավ, գուցե
փողոցներն են փոխել իրենց ուղղությունը,
կամ երկրաշարժ էր նրա վերադառնալու պահին:
Գտեք նրան, խնդրում եմ:
Ստուգեք արխիվների մութ խորքերը, հաստատեք
մարդկանց ինքնությունը,

փնտրեք նրանց արվարձանային գնացքներում և
վարձակալված բնակարաններում,

շրջապատեք նրան, բռնեք և թույլ մի տվեք նրան
փախուստի դիմել:

Փնտրեք նրան անձրևի տակ, բարձրացրեք
գրասենյակի գորգը,

մաղով անցկացրեք ծովափի ավազը,
ստուգեք կենդանաբանական այգիները:

Արեք այնպես, ինչպես ֆրանսիացիներն են
սովորաբար ասում.

*Cherchez la femme!*¹

Երբ նա հեռացավ, չթողեց անգամ մի աննշան հետք,
բայց ես կհայտնեմ՝ նրան բնորոշ ևս մի շարք գծեր.
Նա ծնվել է կյանքի արևոտ կողմում և ունի դարերի
լույսով ներծծված մաշկի գույն:

Չնայած ծնվել էր որպես եղնիկ, բայց ունի
երկու կուրծք ու երկու ազդր՝ կնոջը հարիր,
ինչնիցե, նա ունի եղնիկի կորցրած
շիտակ հայացք:

Եթե նրա մաշկի ու աչքերի գույնը ձեզ բավական չեն
գտնելու նրան,
ահա մի քանի մանրամասներ ևս.

¹. *Cherchez la femme!*/Ֆրանս./ - «Փնտրեք կնոջը»՝ Ալեքսանդր
Դյունայի սրեղծած արտահայտությունն է այն իմաստով, որ
տղամարդկային ցանկացած խնդրի աղբյուր կարող է լինել կինը:

նա կրում է արևի լույս, ամպերի խոնավություն և ունի
ամենագեղեցիկ շրթունքներն աշխարհում:
Թե որպես ընկեր, թե որպես թշնամի, ասացեք նրան
վերադառնալ իր երաժշտությամբ,
ասացեք նրան՝ ես դեռ եմ նետել իմ գոռոզությունը,
ես նույնիսկ այլևս չեմ փիլիսոփայում:

Եթե փողոցում դուք պատահաբար տեսնեք նրան,
ասեք, թե որտեղ եմ ապրում,
ասեք նրան՝ վերադառնա, քնի ու արթնանա
իմ կողքին:

Մի անգամ, նրան շոյելուց, նա գողացավ
իմ մատնահետքերը:
Դուք՝ անմեղ ահաբեկիչների վրա միշտ հարձակվող
պետական անվտանգության ուժ,

գտեք այս աղջկան, նա ինձ թողեց առանց ինձ,
նա աշխարհի ամենաքաղցր անկյունն է,
դուք չգիտեք՝ երբ նա հանի իր հագուստը,
որքան նա վտանգավոր կլինի մարդկության համար:

TRASHOLOGY¹

*Տիեզերքը պարզապես աղբ է՝
կուրակված ինչ-որ հնարքով:
Հերակլիիդոս Խավար*

Յոթ աղբաման կա փողոցի անկյունում
(բոլոր յոթն էլ մի գծով շարված)
առանց կափարիչի, բերանները լայն բացած՝
ճանճերի համար, հանց որկրամուլ:
Այս թաղամասի մարդիկ զգուշորեն
դատարկում են իրենց տարաները:

Ահա մեր նյութական ու գաղափարախոսական
սոցիոլոգիայի մնացորդները,
մնացորդներ, որոնք պլաստիկ տոպրակներում
հայտնվում են այստեղ ցանկացած վայրից,
ցանկացած ժամանակ: Նայեք այդ փքուն
տոպրակներին՝ ինչպես են նրանք
ագահաբար լցվում փորը աղբամանի

և արձանագրում քաղաքի տխուր պատմությունն ու
բնակիչների ներքին կարիքները:
Աղբամաններում կան ամեն տեսակի իրեր,
ապրելակերպ եւ դրա ավելցուկները,
մարդկության մասին ավելի շատ տվյալներ կարող ես
գտնել, քան մարդաբանության արխիվում:

¹ Trashology - թափոնների վերամշակում քիզնեսի համար:

Ահա դատարկ շշեր, խաշած բանջարեղեն
և այլ անպետք բաներ,
ժանգոտված սաքսոֆոն, ժամկետանց դեղամիջոցներ,
վանդակի սատկած թռչուններ,
մանկական տակդիրներ, որոնք պատրաստ են
դառնալ պայթուցիկ մեթան գազ:

Յոթ աղբաման՝ մայթի եզրին,
(բոլոր յոթն էլ մի գծով շարված):
Գուշակիր մետաղյա բերանների ուղերձը՝
մենք կմեռնենք առատությունից ու լիությունից,
մենք ստիպված կլինենք դիետա պահել
գոյատևման համար:

Մինչ կյանքից անդին կեցած մարդիկ մեռնում են
սովից, ծարավից ու ճանճերից:
Ահա մի սև կատու աղբակույտի վրա
և մի խեղճ ծերուկ, որ հենց նոր եկավ,
գուցե նա ինչ-որ կոշիկ է փնտրում
զբոսանքի համար:

Յոթ ազահ աղբաման՝ մայթեզրին
(բոլոր յոթն էլ մի գծով շարված),
որ բանաձեւում են ապագայի գեղագիտությունը,
անցյալի էթիկան,
քաղաքակրթության բանարվեստը,
որ սպասում են ֆոսֆորային կոշիկներով և
շալվարակալներով գունատ աշխատողների,

որոնք սպասում են բեռնատարին, որ դանդաղ ու
ծանրաշարժ գալիս է կատարելու գործը:

ԱՐԴԵՆ ԲԱԼԻ ՍԵՉՈՆ Է

*Quand nous en serons
au temps des cerises...¹*
Շան-Բարիսյո Կլեման

Նորից բալի սեզոն է, բայց բալ
չի նշմարվում ոչ մի տեղ:
Եկավ սեզոնը, բալի սեզոնը՝
մայիս և հուլիս ամիսները,

ծառերն արդեն ծաղկել են մարտին և ապրիլին,
բայց դեռ բալ չկա:
Հաշվի առնելով, որ բալի սեզոն է, լավ կլինեք
տեսնել մի երկու բալ՝

քաղցր կամ նույնիսկ դառը:
Քաղցր բալը կարմիր է լինում,
դառը՝ դեղին. դառը բալը ուշ է ծաղկում,
կարմիրներն՝ ավելի շուտ:

Բայց այսօր ոչ բալ ենք տեսնում, ոչ էլ
բալենի:
Լավ աճելու համար բալենուն պետք է
բերրի հող,

*1. /Ֆրանս./ Երբ մենք կլինենք
բալի սեզոնին...*

ցանկացած տեղ աճած բալենին պտուղ չի տալիս,
հատկապես՝ կարմիրը:
Դառը բալերն ավելի հեշտ են աճում,
քան քաղցրները,

նույնիսկ ոչ պիտանի հողում աճած բալենուց
կարող ես դառը բալ քաղել:
Բայց այսօր չես տեսնի ոչ քաղցր, ոչ էլ
դառը բալ:

Բալենին պետք է տնկել
հյուսիսային քամուց հեռու:
Այն լավ չի աճի նաև չոր երկրներում.
բալերը կլինեն պստիկ ու անհամ:

Մենք չենք տեսնում ոչ փոքր, ոչ էլ մեծ պտուղ:
Մենք պետք է տնկենք բալի ծառեր:
Ցուրտը վնաս է հարթավայրերում և հովիտներում
աճած բալենիների համար:

Ցուրտ պայմանները ձմռան վերջին և գարնան սկզբին
ամենավատն են:
Թե ինչ կհավաքենք, կախված է եղանակից
տարվա ընթացքում:

Դժվար է կանխատեսել՝ ինչպիսի բերք կժողովենք:
Ո՞վ գիտի՝
բալենիները կաճե՞ն, կհասցնե՞ն ծաղկել:
Սեզոնը կգա, կտեսնենք:

Սեզոնը հաստատ կգա, բայց արդյո՞ք
բալը կլինի:

ՊՈՇՁԻԱՆ ՄԱՀԱՑԱԾ Է, ԲԱՅՑ ԴԱ ԵՍ ՉԷԻ

Գուցեն գտել եք իմ մատնահետքերը
նրա մարմնի վրա,
ես մոտեցա նրան, որովհետև կարծում էի՝
դեռ մահացած չէր:

Դուք ինձ բռնել եք՝ ձեռքերս նրա մարմնի վրա,
բայց ես պարզապես փորձում էի նրան
վերակենդանացնել:
Երբ տեղ հասա, նա գրեթե մահացած էր,
նա հազիվ էր շնչում:

Ճիշտ է, երբեմն նա գալիս էր խաղալու իմ ոտքերի
արանքում:
Բայց ես երբեւէ մտադրություն չունեի բանաստեղծ
դառնալ:
Ո՞վ է ասում, թե ինձ տեսել են: Ես ուղղակի անցնում էի
մոտով:

Չգիտեմ, թե ով կարող էր լինել նա, բայց երբ հասա
այնտեղ,
ես նրան գտա արդեն մեռած՝ բոլորված մարդկանցով:
Վստահ եմ՝ նա խեղդվել է հենց նրանց ձեռքով,
ովքեր իրենց բանաստեղծ են հռչակել:

Մի՛ ձերբակալեք ինձ, որովհետև ես չեի,
իրականում ես բանտ չեմ սիրում:
Մի քանի հին թերթ բերեք՝ գոնե ծածկելու
նրա մարմնի մի մասը:

Ի դեպ, ինչպե՞ս եք պատրաստվում թաղել նրան:
Պոեզիան չի տեղավորվում բալենու
փայտի դագաղում:

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԲԱՆՏԵՐ

Ամենագեղեցիկ բաները հնարավոր է՝
գոյություն չունեն:
Ամենախորհմաստ հաղորդագրություններն, օրինակ,
դեռ պետք է արտասանվեն:
Երկրների մեծամասնությունն այսօր
անհայտ երկրներ են:
Աշխարհում գոյություն ունեն շատ բաներ ու
շատ մարդիկ, որոնք չկան:
Մենք ծնվել ենք մի տարածքում, որ գոյություն չունի
և, հետևաբար,
մենք գոյություն չունենք այնքանով, որքանով որ
չկանք, իսկ մենք չկանք:
Մենք բոլորս անհրաժեշտություն ենք, բոլորս
ընթացք ենք, բոլորս՝ միջնորդություն,
բոլորս՝ դատարկություն, բոլորս՝ իշխանություն,
բոլորս տարօրինակություն ենք,
Մենք բոլորս պարտավոր ենք մտածել, զգալ,
ու արտահայտվել:
Եվ գրեթե շատ բան մենք դեռ
պարտավոր ենք անել,
իսկ գոյություն չունեցող իրերը
փնտրում են իրենց անունները
անգո նվաստացումից փրկվելու
համար,
պատրաստելու այն, ինչը դեռ չկա: Բայց
այն, ինչը գոյություն չունի, նաև
գոյություն ունի:
Կյանքը բաղկացած է իրերից, որոնք
դեռ գոյություն չունեն:

ՃԱՌ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ

Ճի՞շտ է, որ նույնիսկ երբ մահվան կապանքներն
ինձ շղթայում են հողին,
կյանքն աշխարհում շարունակում է զնալ
իր հունով:

Արևը դեռ կշողա՞ իմ մահից
հետո:

Գնացքը սովորականի պես հինգ ըոպե կկանգնի՞
կայարանում:

Իսկ պղտոր ալիքները, որ թափվում են այս ափին,
կշարունակե՞ն
թափվել լողափին նույն կերպ ուժեղ
ու ապարդյուն:

Իսկ խեցգետինը, որ ջուրն է սուզվել իմ ազդրի մոտով,
վաղը
կկառչի՞ ոմն մեկի ազդրից իր արքանածև
ճանկերով

և կհեռանա՞ անմիջապես,
ինչպես անում է փախուստի ժամանակ:

Ես ինձ հետ չեմ տանի ոչ արևը,
ոչ գնացքը և ոչ խեցգետինը,

ես մեն-մենակ կսուզվեմ դատարկության մեջ,
և դա կլինի բոլոր օրերի ամենամիայնակ օրը:

Իսկ աշխարհն ընդհանրապես ուշադրություն
չի դարձնի իմ բացակայությանը
այնպես, ինչպես այն բաց տարածքին, որ երկնքում
մնում է վայրի բադերի չվումից հետո,

Իսկ ես (միթե՞ սարսափելի կորուստ չէ սա) այլևս
չեմ լինի:
Չե՞մ կարող ասել, ինչպես մանուկ հասակում,
չեմ ուզում գնալ:
Ինչևէ, ես կհեռանամ առանց ուղեբեռի՝
միանալու մեծամասնությանը:
Իսկ դանակ սրողը կհնչեցնի իր ֆլեյտայի ձայնը
և դանակներ կսրի
քաղաքում, ինչպես միշտ, փոքրիկ աստղեր
արձակելով իր սրող քարից:

ՄԱՀ

Ես գիտեմ՝ ինչպես են մահանում կենդանիները.
ոմանք սկսում են սուր ճիչ արձակել,
քանզի իրենց շնչառությամբ արտաշնչում են կյանքը,
և նրանց բացվող աչքերը
առավել տխուր են, քան
հին լեզենդների ամբողջ տխրությունը:
Ես գիտեմ՝ ինչպես է մահը տիրանում,
քանզի ականատեսն են եղել դրա,
դա ամենևին էլ գրավիչ արարողություն չէ:
Ես տեսել եմ՝ ինչպես է ընկերս մահանում
հենց այդ պահին ու այդտեղ՝
աչքերը լայն բացած, ասես ուզում է
շարունակել աշխարհի դիտումը,
դեմքին՝ ժպտալու պես ինչ-որ արտահայտություն,
բայց դա ամենևին էլ ժպիտ չէր:
Նույնիսկ այդ տեղում մնալը դժվար էր,-
նրանք մեզ խնդրեցին թղթի վրա գրել
մահացածի անունը,
և այդ պահին չգտանք մի պիտանի գրիչ:
Եվ կարծես դա հարացույցն էր բոլոր աղետների,
կես ժամ սևեռում նայում էինք դիակին:-
Մահը լավ բան չէ
և երբեք էլ այդպիսին չի լինի:

ԿՅԱՆՔԸ ԺԱՍԱՆԵԼ Է, ԱՅՆ ՔՈ ԱՉՔԵՐՈՒՄ Է

Verrà la morte e aurà i tuoi occhi¹
Չեզարե Պալեզե

Կյանքը ժամանել է, այն քո
աչքերում է,
Ճիշտ է, բասկերի խնդիրը լուծված չէ,
եվրոպական խնդիրը՝ նույնպես,
և թե Ամերիկայում, թե Աֆրիկայում
կիսոված է կոնֆլիկտների մի ամբողջ դեզ:
Օվկիանիայում չնայած դրանք միայն երկուսն են,
բայց՝ ահավոր մեծ նշանակության:

Իսկ, ըստ երևույթին, կարևորն այն է, որ հրատապ չէ
այս ամենը, երբ դու այստեղ ես:
Թող այդ պատերազմական պատմությունները
չթափվեն մեր գլխին,
(մենք բավականին պատմություն ունենք
մեր ննջարանում),
Չեմ ուզում լսել վերջնական ձախողումների մասին
քիմիայի բնագավառում...

1. Verrà la morte e aurà i tuoi occhi - Չեզարե Պալեզեի բանաստեղծության այս վերնագիրը բառացիորեն բարձրանվում է որպես՝ «Մահը կգա և կունենա քո աչքերը»: Յնցող և հակիրճ այդ հիշարժան բանաստեղծությունը հայտնաբերվել է իրալացի բանաստեղծի թղթերում, երբ նա վերջ էր փվել իր կյանքին:

Դու Երկրի վրա ամենալուրջ հարցն ես,
ավելին նույնիսկ, քան ֆիզիկայի,

մետաֆիզիկայի բոլոր հարցերը: Դու մայրն ես
և դուստրը
բոլոր մարտերի: Կյանքը ժամանել է, և այն քո
աչքերում է:

Եվ սա պետք է հայտարարվի հրապարակավ,
քանզի սերը (ինչպես ոմանք կարծում են)
երկուսի կամ երեքի մտահոգությունը չէ:

Սերը մեծ նշանակություն ունի բոլորիս համար:

ՇՈՒՆԸ

Բարև, շուն՝ առանց ցեղի ու անունի,
շուն,
ով ցույց է տալիս լեզուն, կարծես այն լինի ջրահեղձ
նավազի գուլպա:
Դու ինձ նման՝ կասկածամիտ,
փողոցն անցնելուց առաջ,
ապշած նայում ես շուրջդ, նայում
ամեն ինչին:
Դու գաղափար չունես իմ տեսակետի, հերքումների
ու խորիմաստ նախագծերի մասին,
ես էլ՝ քո: Այնուամենայնիվ, ես չեմ ակնկալում
ավելի մեծ փառք, քան քոնը:
Մենք փախուստի ենք դիմել՝ կտրելով մեզ տան
անկյունից կապած շղթան,
և մեզնից ոչ ոք չի տենչում բակապահ շների
հարմարավետությունը,
կամ կրկեսի շների ծառայողական մեծամտությունը:
Մենք բավականին նման ենք իրար.
անտեր-անտիրական, հեռանում ենք հասնելուն պես,
դուրս ենք գալիս
մտնելուն պես, բնավ օտար ենք այս աշխարհում:
Բայց, ու ու ու՛,
մենք մեր ոսկորները մեքենաներին չենք տա,
որոնք հառաչելով անցնում են մեր կողքով:

Մենք մեր հին քաղցով կվերադառնանք
նոր դռների մոտ,
իսկ վաղը, հավանաբար, նորեն կտեսնենք իրար
այստեղ կամ այնտեղ:
Ուրեմն, շուտով կտեսնվենք: Ես բարձրանամ
այս մարդաշատ ավտոբուսը,
մինչ դու կանհետանաս մութ փողոցում:
Ուրախ օր, եղբայր:

ՄԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

Երբ լույսն անսպասելիորեն մարում է,
մենք բռնվելու տեղ չենք գտնում,
ոչ մի տեղ՝ գնալու, ոչ մի անելիք.

իհարկե, անհնար է մթության մեջ:
Անմխիթար վիճակ, բայց, ինչ-որ առումով՝
նաև լավ:

Լավ, քանզի այն կոտրում է գերինքնավստահությունը,
որ տեղավորում ենք մեր ծանոթ միջավայրում,
այն վերահաստատում է նաև մեր բուն կացության
միայնությունն ու անօգնականությունը:

Լույսը մարեց,- անսպասելիորեն ասացի ես,
քանի որ դա միշտ պատահում է հանկարծ,
դժբախտ պատահարի նման: Մենք տեսնում ենք, որ
մեր հնարավորությունը
կարող է կախված լինել հէկ-ի լարերից,
որոնցով ձգվում են մեր քմահաճույքները՝
սյունից-սյուն.

մեր վճռականությունն այնքան ամուր է, որքան լամպի
փխրուն մետաղե տարրը:

Իսկ մինչ այդ մենք ոչ այլ ինչ ենք, ոչ այլ ինչ,
քան երեխաներ, ովքեր մթության մեջ
վախենում են իրար կորցնելուց:

Երբ լույսը մարում է, հեշտ չէ
շարունակել արդեն սկսած խոսակցությունը:
Ամեն ինչ նույնն է, չնայած մթությանը, կամ ամեն ինչ
պետք է լինի գրեթե նույնը:

Բայց երբ լույսը մարում է, դու լռում ես
կամ փոխում թեման,
և մինչև պահարանից չլուսավորի
այդ հին լամպը,
պարզ է, որ դու սաստիկ անճանաչելի կլինես
և կխարխափես մթության մեջ:
Պարզապես լավ է նաև մթության մեջ,
լավ է, որ դեռ լույս չէ:
Մինչև մենք չսովորենք ապրել խավարի մեջ,
չենք իմանա՝ ինչպես ապրել լույսի ներքո...

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԵՐԳԵՐ

*Sombras imaginarias
vienen por el camino imaginario
entonando canciones imaginarias¹.*

Nicanor Parra

*1./բասկ./- «Երևակայական սրվերները
գրոսնում են երևակայական ձանապարհով
երևակայական երգեր երգելով»:*

Նիկանոր Պարրա

ԲԱԼԼԱԴ ԼԾԿԱՆ ՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ¹

Կապուտաչյա շներ, որ ձգում եք սահնակ՝
պատրաստված կետի ոսկորներից, այայայ -
այդ ինչպե՞ս եք սլանում հյուսիսային քամուն
ընդդառաջ, հավերժ ձյունապատ
հարթավայրերով:

Քաղցած շները վայրի թափառում են այնտեղ՝
մեռած սառցե ծովում որս գտնելու հույսով, այայայ:--
Ո՞վ է ձեր տերը: Ո՞ր Սպիտակ Տիկնոջն եք ծառայում,
որ մտրակն առած՝ կառավարում է ձեր հեքը:

Ո՞ր նպատակը, ո՞ր հանձնագիրը և ո՞ր
երևակայությունն է ձեզ այդքան ուժ ու եռանդ
տալիս, այայայ--

1. Բալլադը վերագրվում է Գուրամ Սուլաքարիին: Բալլադի հեղինակից պահպանվել է աղբյուր մի լուսանկար, որում նա էսկիմոսի հագուստով է՝ սառույցի կտրրների կտրելիս, կառուցվող իգլուի կողքին: Նրա կենսագրությունից քիչ մանրամասներ են հայրնի: Հայրնի է, որ նա ծնվել է 1890թ., Թբիլիսիում, 1905թ. նրա ընկերակիցը լքել է Վրաստանը և մեկնել Կիև: Նա հեղափոխական խմբի անդամ էր: 1909թ. գաղթեց Փարիզ և, ըստ իրեն այնպեղ ճանաչողների նկարագրության, նա նիհար էր, գունաւոր ու զուսպ: Նա սառույցով սուրճ էր խմում ու քնում այն ժամանակ մոդայիկ բազմոցների վրա: Այնպեղից մեկնեց Գրենլանդիա՝ ապրելու էսկիմոսների հետ, և 1917թ. ամռանը նա մեկնեց Սանկի-Պետերբուրգ և ողջ սեպտեմբերն աշխարեց Լեոն Տրոցկու հրամանատարության ներքո: Երբ սկսվեց սրալինյան հետապնդումները, նրան աքտրեցին Սիբիր: 1933թ. նա այնպեղից փախավ Էսկիմոսների շնառար հարթավայրեր, որպեղ նրա հեքըն ընդմիջար կորավ: Այս երգի վրացերեն բնօրինակը թվագրված է 1914թ.:

դուք երբեք չեք հասնի
այդ նպատակին, այդ հանձնագրին և
այդ երևակայությանը:

Մինչ մարդիկ մտնում են իրենց իզլուները²,
դուք բոլորդ մնում եք դրսում, այայայ–
և, ամենասարսափելին՝ դուք պետք է զոհաբերեք
ամենաթույլին ձեր քաղցը հագեցնելու համար:

Երկար ստվերներով երկրի հավերժական
սպիտակության պրոլետար սպիտակ շներ,
այայայ–
դուք նույնիսկ հաչել չգիտեք, և երբ ոռնում եք,
կարծես բարեխառն անտառների գայլեր լինեք:

² Իզլու – էսկիմոսների՝ սառույցից կամ ձյունից պատրաստված կացարան: Նրանք կարող են գյուղեր հիմնել իզլուներով, որոնք կապվում են միջանցքներով:

ՔԱՂԱՔՆԵՐԸ

Այդ քո մարմինն է, որն այժմ իմ քաղաքն է, դու հիմա
այն երկիրն ես, որը ես սիրում եմ:

Ինձ համար ապրելու վայրն այնքան էլ կարևոր չէ:
Փարիզ, Տիբրուկտու,
Նյու Յորք, Բոնբեյ, Սեզուրա,
Բեռլին, Կատմանդու,
Սիդնեյ, Ադիս Աբեբա, Ալժիր, Լիսաբոն,
Բուդապեշտ, Կիև, Օտտավա:
Դու ես հիմա իմ քաղաքը, իմ երկիրը,
ինձ գերեզմանը և այն վայրը, որտեղ ծնվել եմ:

Ինձ համար մեռնելու տեղը նույնիսկ կարևոր չէ.
Հռոմ, Ֆրիբուրգ,
Կիտո, Տալլին, Լուանդա,
Տաշքենդ, Մուտրիկու,
Շանհայ, Ստամբուլ, Պրայա, Պրահա, Կիզալի,
Բանգկոկ, Ամստերդամ, Բասրա.

քանզի հիմա դու ես իմ քաղաքը, իմ երկիրը,
իմ գերեզմանը, այն վայրը, որտեղ
հանդուրժում եմ ամեն ինչ:
(Մուհամմեդ Միզիան¹)

1. Այս քանաստեղծությունը վերագրվում է Մուհամմեդ Միզիանին:
Նա ծնվել է Աքսիիր քաղաքում, 1956թ.՝ Մարտկոչի անկախության
փարում: Երբ նա երկու տարեկան էր, իր ընտանիքի հետ ենթարկվեց
ռիֆական² իշխանությունների բռնաճնշումներին, և նրանք ստիպված
եղան փախչել Եվրոպա: Նա իրեն ոչ մարտկացի է համարում, ոչ
ֆրանսիացի: Չունենալով Ռիֆի քաղաքացիություն, նա ներկայանում
էր որպես մարդ առանց երկրի:

2. Ռիֆի Հանրապետություն – պետություն Մարտկոչում 1921-1926
թթ.:

ՄԵՂՔ

Երեխա հասակում, մենք ականատեսն էինք
նրանց վերադարձին,
ովքեր տուժած էին հին պատերազմից,
բանտից ու արտոհից, ովքեր անցել են անձրևի միջով՝
կրելով մի ողջ ժողովրդի մեղքը:

Դպրոցում, ռադիոյում, եկեղեցում և
հեռուստատեսությունում
իշխում էին Հաղթողները՝
մեղք տարածողները, ովքեր չարությունը
վերագրում են պարտվածներին:

Մի վերցրեք մեղքն ինձնից, ոչ իմ մեղքը,
ոչ էլ իմ ժողովրդի հինավուրց մեղքը:
Քանզի մեղքից զատ ես ոչինչ չունեմ,
կարծես թե ոչինչ չեմ արել:

Գիտակցելով, որ մենք այդ մեղքի մի մասն ենք կազմել,
մենք ջանում ենք փոխել իրավիճակը
և շարունակում հին դիմադրությունը ընդդեմ ազդու
ուժի և մեղքն արդարացնողների դեմ:

Ճիշտ է, մեզ երբեք չի հաջողվել հղկել
հասարակությունը,
մենք նույնիսկ ինքներս մեզ չենք կարող փոխել:

Բայց հայտնվեցին մեղքը տարածողներ ու
մասնագետներ՝ այն բոլորին վերագրելու համար:

Մի վերցրեք մեղքն ինձնից, ոչ իմ մեղքը,
ոչ էլ իմ ժողովրդի հինավուրց մեղքը:
Քանզի մեղքից զատ ես ոչինչ չունեմ,
կարծես թե ոչինչ չեմ արել:

Նույնիսկ զանազան պատիժների պահին
ոչ հպարտացել եմ ես իմ արածով, ոչ էլ՝ զղջացել:
Ամեն դեպքում, դուք՝ մեղքի խնամակալներ,
ինձ մեղքից ազատելու պատճառ չունեք:

Ինձնից մի վերցրեք այն: Թողեք ինձ իմ մեղքի հետ,
քանզի մեղքից բացի այլևս ոչինչ չունեմ,
այն մեղքից, որ դուք վերագրում եք ինձ,
կամ այն մեղքից՝ որ չգիտեի՝ ինչպես
բարեփոխել իրավիճակը:

Մի վերցրեք մեղքն ինձնից, ոչ իմ մեղքը,
ոչ էլ իմ ժողովրդի հինավուրց մեղքը:
Քանզի մեղքից զատ ես ոչինչ չունեմ,
կարծես թե ոչինչ չեմ արել:

ԳԵՏԸ

Դա Դանուրը չէ,
նչ էլ՝ Միսիսիպին:
Այն կոչվում է Իբայզաբալ¹ և հոսում է
այն քաղաքով, որտեղ ծնվել եմ:
Դա Դանուրը չէ, ոչ էլ
Դեղին գետը՝
ժանգոտած ջրով
փոքր, կարճ, մեղ գետը:
Դա այն գետն է, որի քարքարոտ երեսին
մենք խաղում էինք:

Այն չի կոչվում Դանուր,
նչ Նեղոս, ոչ Նիազարա:
Այն կոչվում է Իբայզաբալ և հոսում է
այն քաղաքով, որտեղ ծնվել եմ:
Ես հեռացել եմ այնտեղից, անցել
հազարավոր կամուրջներ:
Չեմ պատկերացրել, որ երբևէ
կրկին կհանդիպեմ իմ գետին:
Հիմա իմ ներսում ես զգում եմ
Իբայզաբալիս պղտոր ջրերը:

Ես զգում եմ՝ ինչպես են ջրերը ցայտում
իմ ներսում.

*1. Իբայզաբալ – բասկերեն նշանակում է «լայն գետ»: Իբայզաբալն
իրականում փոքր գետ է, որ հոսում է Դուրանգոյի և Յուրեպայի միջև
ընկած տարածքով և Բիլբաո քաղաքի մոտ միանում Ներվիոն գետին:*

հավանաբար, չիմանալով, խմել են
այնտեղից եկող ջրից:
Դա Դանուբը չէ, ոչ էլ
սուրբ Գանգեսը,
այն մեր մանկության
անտեսված գետն է:
Հիմա Իբայզաբալի մռայլ ջրերը
հոսում են իմ սրտում և նրա շուրջ:

Այն չի կոչվում Դանուբ, գետը
կոչվում է Իբայզաբալ:
Գետ, որ խորությամբ թափանցել է իմ մեջ,
չնայած ես այնքան հեռու եմ:
Գետ, որ այն ժամանակից ի վեր
անկանգ հոսում է երակներիս միջով:
Այն միակը, որ ինձ կանչում է անդադար
իսկական անունով իմ...
Իբայզաբալի պղտոր ու հնագույն ջրերն են
վերստին մեծարում ինձ:
(Ռոբերտո Մոլիսիկա²)

2. Այս բանաստեղծության ենթադրյալ հեղինակը Ռոբերտո Մոլիսիկան է: Ծնվել է Դուրանգոյի Սան Ֆաուստո իսպանախոս շրջանում, 1958թ.: 1980թ. նա մեկնել է Միացյալ Նահանգներ՝ այցելելու ամերիկացի մորաքրոջը՝ Իցիարին, ով ապրում էր Արիզոնայում և աշխատում էր Red Rock (Կարմիր Ժայռ) ճամբարում՝ որպես ընդունարանի աշխատակից: 1986թ. Մոլիսիկան սկսեց աշխատել ջութակ պարուստի տղա վարպետի մոտ: Նա այժմ ապրում է իր գործարարի տանը՝ Սան Թաուն քաղաքում:

ԲԱՆԿԻ ԱՎԱՐԱՌՈՒՆԵՐ

Մենք՝ բանկի ավարառուներս, շատ լավ էինք ապրում,
բայց ամեն ինչ խորտակվեց, երբ բանկատերերը
սկսեցին թալանել ամեն կերպ.

հազարավոր մասնաճյուղերով, համակարգիչներով,
ներդրողներով ու վերստուգիչներով. ամեն ինչ
այնքան նրբագեղ է արվում:

Մենք՝ բանկի ավարառուներս, ոչինչ ենք համեմատած
բանկատերերի հետ. չենք կարող մրցել:
Մենք՝ բանկի ավարառուներս, ոչինչ ենք,
քանզի չենք կարող լոկ ավարով ապրել:

Կառավարությունն օրենքով օժանդակում է
բանկատերերին,
ոստիկանությունը՝ նրանց պաշտպանում. ուրեմն՝
բանկերին սպասվում են ամենախոշոր
կողոպուտները:

Յուրաքանչյուր բանկ, համարելով
նորմալ գործելակերպ,
փողի փնտրտուքով՝ անամոթաբար գողություն է
անում ավելի շատ, քան հազարավոր
բանկի ավարառուներ:

Ի՞նչ կարող ենք անել բանկի ավարառուներս,
սովից մեռնելուց առաջ:
Դե, գուցե սկսենք խնայողություններ ու
փոխառություններ անել.
սա առայժմ, իրոք, ոչ այլ ինչ է, քան լոկ գաղափար,
այլ կերպ ասած՝ չակնարկեք դա ոչ մեկին:

ՀՈՐԻՋՈՆԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Փախչելով օրենքի երկար ձեռքերից՝ հասնում ենք
իրար հորիզոնում,
և ահա մենք հորիզոնում ենք, հորիզոնում,
հորիզոնում ենք որպես դեսպաններ:

Որտեղի՞ց եք: Ո՞ւմ եք ներկայացնում:
Ի՞նչ է ձեր ուզածը:
Դեսպան լինելու համար այստեղ ևս դրոշ է պետք,
դեսպան՝ հորիզոնում:

Մենք այլևս չենք հիշում, թե ում ենք ներկայացնում
առանց դրոշի եւ առանց երկրի:
Դեսպաններ՝ առանց դիվանագիտության,
առանց մանդատի, դեսպաններ՝ հորիզոնում:

Հորիզոն՝ անորոշ սահմաններով, որտեղից
հեռուներն են փախչում
առանց վերադարձի, մի կետ, որտեղ
ամեն ինչ անհետանում է:
Հենց այդ սահմանին, մենք նույնպես մոլորվում ենք՝
մենք՝ դեսպաններս հորիզոնի:

Նայեք արատրոսին: Ոչինչ չի՞ հիշեցնում ձեզ:
Մեր դրոշը նման չէ՞ նրան:

Այն դրոշի տեսք ունի, դրոշ, որ կարող է մեզ
համապատասխանել, մեզ՝ դեսպաններին,

դեսպաններին՝ հորիզոնում, հորիզոնում,
որտեղ ամեն ինչ կորչում է
հորիզոնում, հորիզոնում:

(Խուլեն Բաղիուլա¹)

1. Բանասրբեղծությունը վերագրվում է Խուլեն Բաղիուլային: Նա ծնվել է Օնդարրոսայում, 1957թ.: 1977թ. այդպիսի փախչելով՝ նա մինչև 1984թ. ապրել է Բայրոսայում, հետո մեկնել է Հյուսիսային Եվրոպա, իսկ ավելի ուշ՝ Ամերիկա: Մինչև 2000-ականների սկիզբը նա ապրել է Չիլոե արշիպելագում, եղել է Ուդաբիցայի՝ քաակյան մունիցիպալիտետների ասոցիացիայի խորհրդի անդամ, որտեղ էլ նրան ասել են, որ քասկը պետք է լինի իր ազգի դեսպանը ցանկացած երկրում: Խ. Բաղիուլան 20 փարի առանց փաստաթղթերի էր: Նա ուներ միայն Կայ Ազրեհի անունով փրված ֆիննական անչնագիր, որը նաև ժամկետանց էր:

ԱԼՔԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆԻ ԼԵԶՈՒՆ

Մարդ, ով լեզուն հանում է
պատից՝
այդ պաստառի Ալբերտ Էյնշտեյնը,
ի՞նչ է ուզում ասել:

Նա ե՞ս այն կապուտաշյա, երկար խոպոպներով
մարդկանց նման
չի սանրել մազերն ամբողջ կյանքում: Իսկ հիմա
ու՞մ է նա ծաղրում այդ լեզվով:

Գուցե՞ նա քամահրում է քսաներորդ դարը:
Գուցե՞ նա լեզու է ցույց
տալիս այս չափազանց բարդ աշխարհին:
Արդյո՞ք նա այդպես է վարվում փողոցով անցնող
մարդկանց հետ:
Թե՞ նա ինձ է ծաղրում:

Լսիր, ո՞ւմ վրա ես լեզուդ հանում՝
Միացյալ Նահանգների՞, թե՞
Անմիացյալ Նահանգների: Թե՞ մեզ վրա՝
թշվառներիս:

Այդ լեզուն թողնում է տպավորություն
գոյություն մասին,
ավելի տրանսցենդենտալ է, քան
հարաբերականության տեսությունը:

Քարուլի շուկայում վաճառվում են
զինամթերք ու խաշխաշ:
Մենյակի պատին Ալբերտ Էյնշտեյնի նկարն է՝
լեզուն հանած:
(Միրեն Լանդիրիբար¹)

1. Բանասպեղծությունը վերագրվում է Միրեն Լանդիրիբարին: Նա ծնվել է Օչագաբխայում, 1980թ.: Նա ֆիզիկա է սովորել ԱՄՆ-ում և որպես պրոֆեսոր աշխատել էր Գերմանիայում, Շվեդիայում, Նամիբիայում և Բասկերի երկրում: Նա Նոբելյան մրցանակի թեկնածու էր, հրապարակել է տասնյակ գրքեր: Վերջին տարիներին գրել է միայն էսսեներ գիտական գիտելիքների անօգտակարության մասին ու բանասպեղծություններ:

ԽՈՍԵՔԱ ՍԱՐԻՈՆԱՆՂԻԱ. Կենսագրական ակնարկ

Խոսեքա Սարիոնանդիան ծնվել է 1958թ. ապրիլի 13-ին, Բասկերի երկրի Բիսկայա նահանգի Իուրրետա քաղաքում: Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, մանկագիր և էսսեիստ Սարիոնանդիան համարվում է բասկերենով ստեղծագործող բոլոր ժամանակների ամենահեղինակավոր գրողներից մեկը: Նա առավել բեղմնավոր գրողներից է, ով վերջին չորս տասնամյակի ընթացքում տարեկան առնվազն մեկ գիրք է հրատարակել: Բացի դրանից, քանի որ Սարիոնանդիան կրում է մի քանի կեղծանուն, նրա ստեղծագործությունների իրական ծավալը դժվար է հաշվել: Նրա տասնյակ բանաստեղծությունների համար երաժշտություն են ստեղծել բասկ խոշոր կոմպոզիտորներն ու երգիչները: Նա նաև թարգմանիչ է, այլ լեզուներից թարգմանում է բասկերեն, մասնավորապես անգլերենից թարգմանել է Սամուել Բուրիջ, Թոմաս Ս. Էլիոթ, Ինչպես նաև պորտուգալացի հեղինակներ Ֆերնանդո Պետա և Մանուել Բանդեյրա:

Խոսեքա Սարիոնանդիան մեծացել է ֆրանկոյական իշխանության թուլացման տարիներին: Մանուկ հասակում նա մի քիչ գիտեր բասկերեն, բայց այն մոռացության մատնեց իսպաներենով ուսում ստանալու ընթացքում, չնայած ծնողներն այն օգտագործում էին իրենց տանը: Պատանեկության տարիներին Խոսեքան նորից սովորեց բասկերեն: Ինչպես շատ նորադարձներ, նա ևս դարձավ իր նոր դավանանքի ուժեղ ջատագովը:

Նա տասնյոթ տարեկան էր, երբ բռնատիրական վարչա-

կարգի գլուխ Ֆ. Ֆրանկոն մահացավ /1975թ. նոյեմբերի 20-ին/: Հաջորդ երեք տարիների ընթացքում Իսպանիան ներգրավված էր խճճված քաղաքական գործընթացների մեջ, ինչն, ի վերջո, հանգեցրեց Իսպանիայի Սահմանադրության վավերացմանը 1978թ. դեկտեմբերի 6-ին: Համաձայն նրա դրույթների՝ երկիրը կորդեգրի դե ֆակտո, եթե ոչ դե յուրե դաշնային մոդել, որի մաս կազմող տասնյոթ ինքնավար համայնքները կունենան տեղական ինքնակառավարման զգալիորեն ընդլայնված լիազորություններ: Սա մաքիավելյան լուծում էր, ըստ որի՝ պետք է բավարարվեր բասկերի, կատալոնացիների և գալիսիացիների պահանջները՝ ճանաչելու իրենց մշակութային և պատմական ինքնությունը, միևնույն ժամանակ՝ տալով ինքնավարություն յուրաքանչյուր տարածաշրջանին (այդ փաստաթուղթը մակագրված էր՝ «սուրճ բոլորի համար»):

Բասկ ազգայնականության կողմնակիցների տեսանկյունից՝ ինքնավարությունը բոլորի համար իրականում նշանակում էր ինքնավարություն ոչ մեկի համար: Այնուամենայնիվ, տարածայնություններ կլինեին, երբ այս առաջարկությունը դրվեր հանրաքվեի և ընտրությունը կատարեր իսպանական ողջ ընտրազանգվածը, քանի որ բասկ ընտրազանգվածն ընդամենը մի փոքր մաս էր կազմում, այն ժամանակ, երբ կատալոնացիների ու գալիսիացիների պատմական տարածքների բնակիչները կազմում էին ընդհանուր ընտրազանգվածի քսան տոկոսից պակաս:

Հետևաբար, բասկյան ազգայնական կուսակցությունը (PNV) կողմ էր ձեռնպահ մնալուն, մինչդեռ ESI-ն /ETA/ և նրան սերտորեն կապված ծայրահեղ ձախ թևի՝ Հերի Բատասունա (HB) քաղաքական կուսակցությունը կողմ էին «ոչ» քվեարկելուն: Արդյունքում բասկ ընտրողների կեսից ավելին ձեռնպահ մնաց, իսկ գրեթե 20 տոկոսը դեմ քվեար-

կեց: Այնուամենայնիվ, 479205 կողմ ձայնը, որը կազմում էր բասկ ընտրողների 30 տոկոսից ավելին, թվով գերազանցեցին «ոչ» ընտրաձայնը, և Սահմանադրությունը ստացավ մոտ 91 տոկոս հավանություն ամբողջ Իսպանիայում: Դա անմիջապես հանգեցրեց Բասկերի Ինքնավար Յամայնքի նախահնքնավարության Գլխավոր խորհրդի ձևավորմանը, որտեղ գերիշխում էր PNV-ն: Իշխանության գալուց մեկ տարի անց PNV-ն հավանություն տվեց ինքնավարության կանոնադրության՝ նոր հանրաքվեով հաստատմանը, որում մանրամասնորեն ներկայացված են ինքնավար շրջանների հատուկ լիազորությունները: ԷՏԱ-ի մի խմբակցություն համաձայնվեց, և կանոնադրությունը հաստատվեց բասկ ընտրողների կողմից: 1980 թվականին Կառլոս Գարաիկոնչեան դարձավ Բասկերի Ինքնավար Յամայնքի՝ *Էուսկարիի Լեհենդակարի*՝ կառավարության նախագահ (Բիսկայայի, Գիպուսկոայի և Արավայի, բայց ոչ՝ Նաֆարրոայի, քանի որ այն իր ինքնավար համայնքի համար ընտրեց առանձին *Լեհենդակարի* կամ՝ նախագահ):

...ԷՏԱ-ի և իսպանական պետության միջև պայքարը շարունակվում էր փողոցներում, և բասկյան զինված կազմակերպությանը հաջողվեց նստել բանակցությունների սեղանի շուրջ: 1973թ. ԷՏԱ ռազմական կազմակերպության ներկայացուցիչների կողմից սպանվեց Ֆրանցիսկո Ֆրանկոյի՝ իր իսկ ընտրած իրավահաջորդ Լուիս Կարերո Բլանկոն, դրանով իսկ ստեղծելով քաղաքական վակուում, որն իր լուծումը գտավ իսպանական սահմանադրական ժողովրդավարության բանակցություններում: Շատ ոչ բասկ իսպանացիներ ևս երախտագիտություն էին զգում ԷՏԱ-ի հանդեպ և հիանում էին նրանով, որ քաջություն ունեցավ ոտքի կանգնելու և պայքարելու ֆաշիստական -ոստիկանական պետության դեմ:

Այսպիսով, ի հիասթափություն նրանց, ովքեր կարծում էին, թե ինքնավար տարածաշրջանային կառավարությունների կողմից իսպանական նոր քաղաքական կարգի իրականացումը կհանգեցնի երկրում քաղաքական լարվածության հանգուցալուծմանն ու ԷՏԱ-ի լուծարմանը, ԷՏԱ-ն ոչ միայն չցրվեց, այլ՝ ընդհակառակը, հավաքագրեց ակտիվիստների նոր խումբ, ովքեր կարծում էին, որ բռնության շարունակականությունը Իսպանիայում կհանգեցնի ապակայունացման և, ի վերջո, առաջարկում էին քաղաքական նոր բանակցություններ, որոնց կմասնակցեն բոլոր քաղաքական խմբակցությունները: Իրականում Բասկերի Երկրի ոստիկանությունը քիչ էր փոխվել բռնապետության ժամանակներից: Բոլոր բասկ ազգայնականների կարծիքով՝ իրենց հայրենիքը օկուպացված է օտար ռազմական ուժերի կողմից...

Խոսեբա Սարիոնանդիան բարձրագույն կրթությունը ստացել է Դեուստո մասնավոր համալսարանում՝ մեկ տարի սովորելով սոցիոլոգիայի բաժնում, այնուհետև տեղափոխվել է բասկյան բանասիրության բաժին: Դեռ համալսարանը չավարտած՝ նա դասավանդում էր բասկյան հնչյունաբանությունն ու գրականություն Բերգարայի Յեռակա կրթության ազգային համալսարանում (UNED): Նա «Փոթ» վերնագրով ավանգարդ գրական խմբի հիմնադիր անդամ էր, որը հրատարակում էր համանուն ամսագիրը: Փոթի կազմում ընդգրկված էին այնպիսի երիտասարդ հեղինակներ, որպիսիք են Բերնարդո Աչագան, Մանու Էրցիլան, Ջոն Ջուարիստին և Ջոքսեմարի Իտուրալդեն, ինչպես նաև երաժիշտ և երգահան Ռուպեր ֕Օրդորիկան: Ինչպես իր ժամանակակիցներից շատերը, ովքեր նվիրված էին սոցիալական արդարությանը և Բասկերի անկախության ձգտմանը, Խոսեբա Սարիոնանդիան ևս միացավ ԷՏԱ-ին (1978թ. գարնանը):

...1980թ. նոյեմբերին իսպանական ոստիկանական մեքենաները շրջապատեցին Խոսեֆայի բնակավայրը և խուզարկեցին տունը: Նրան նստեցրին մեքենան, և հենց այդ պահից էլ սկսվեց վիրավորանքներն ու ծեծը ամբողջ երթուղման ընթացքում: Երբ նրանք դուրս եկան Իուրրետայի սահմաններից, թեքվեցին ընդհանուր մայրուղուց և կանգ առան մի ճանապարհի վրա: Յոթ կամ ութ ոստիկան դաժան ծեծի ենթարկեցին նրան՝ պահանջելով ներկայացնել իր համախոհների անունները: Նրանք Սարիոնանդիային կանգնեցրին պատին և ձևացրին՝ իբր մահապատժի են ենթարկում: Հատուկ կրակային ջոկատը լավ էր պատրաստված: Չնայած Խոսեֆան վստահ էր, որ իրեն չեն սպանի, քանի որ ոչինչ չէին բացահայտել, և նրա խոշտանգումները դեռ նոր էին սկսվում, այնուամենայնիվ, լսելով «կրակ» հրամանը, նա կարող էր զգալ ուսերի, գլխի կողքով սլացող փամփուշտները...

Խոսեֆայի համար դա անակնկալ չէր: Այդ ժամանակ իսպանական պետությունը բասկյան համայնքներում քիչ տեղեկատուներ ուներ, նրանք չունեին նաև տեխնոլոգիական սարքեր, որոնցով կկարողանային հսկողություն սահմանել հեղափոխությունը կանխելու համար: Կասկածյալների կտտանքները նոր կապեր ձեռք բերելու հիմնական միջոցն էր: Ձերբակալվածներից շատ քչերին էր հաջողվում լռել: Սարիոնանդիայի խոշտանգումների ձևերը շատ տարբեր էին՝ եղունգների տակ ատամհատիկներ մտցնելուց մինչև հետանցքը ցախավելի փայտ մտցնելը...

Երբ նա ոստիկաններին ասաց, որ զենքերը թաղել է Մենդիոլա լեռան վրա, նրան տարան այնտեղ և ստիպեցին հողը փորել ձեռքերով: Շուտով նրա ձեռքերն ամբողջությամբ խոշտանգված ու արնոտված էին: Որոշ զենքեր գտնվեցին, որոշները՝ ոչ: Ոստիկանները տեսան խորամանկությունը և

նորից կրակահերթ արձակեցին՝ նախկին ենթադրյալ սպանության կրկնությունը: Չերթական անգամ խոստեբան բախվեց հնարավոր մահվան հետ...

Այսպիսով, 22 տարեկան հասակում, երկու տարի էՏԱ խնձավորմանն անդամակցելուց հետո, Սարիոնանդիան բանտարկվեց՝ սկզբում Մադրիդի տխրահռչակ Կարաբանչել բանտում, այնուհետև երկու տարի՝ Կադիսի մերձակայքում գտնվող Էլ Պուերտո դե Սանտա Մարիա քաղաքի առավելագույն անվտանգ քրեակատարողական հիմնարկում և ապա՝ Սյուդադ Ռեալ պրովինցիայի Չերերա դե Լա Մանչա խստագույն ռեժիմով գործող բանտում: Իսպանիայի պետական քաղաքականությունն էր՝ բասկ բանտարկյալներին իրենց հայրենիքից հեռու պահել, որպես հավելյալ պատիժ ինչպես նրանց, այնպես էլ նրանց ընտանիքների համար:

Կալանավորումից երկու տարի անց նրան դատեցին բազմաթիվ «հանցագործությունների»՝ դինամիտի գողության, զենք թաքցնելու, բանկերի կողոպուտի, առևանգման, Արդարադատության պալատում ռումբ տեղադրելու և այլնի համար: Որոշ մեղադրանքներ ճիշտ էին, որոշները՝ ոչ: Նա մեղավոր է ճանաչվել և դատապարտվել մի քանի հոդվածներով: Սարիոնանդիային չկարողացան դատապարտել միայն սպանության գործով, ուստի էՏԱ-ի հետ կապված՝ նրան ազատագրվեցին ամենաերկար ժամկետով՝ տասնութ տարի, առավելագույն խիստ հսկողություն սահմանված հաստատություններում: էՏԱ-ի և իսպանացի զինվորականների միջև լարվածության պատճառով միայն 1980թ. 91 զոհ է գրանցվել:

Այնուամենայնիվ, այդ նույն տարում խոստեբան ստացավ երեք գրական բասկյան մրցանակ՝ *Premio Ignacio Aldecoa*, *Premio Resurrección María de Azkue* պոեզիայի համար և *Premio Villa de Bilbao*՝ կարճ պատմվածքների համար: Նա

շարունակեց լինել բեղմնավոր գրող՝ գտնվելով բանտում: Պուերտո Սանտա Մարիայում Սարիոնանդիայի ռադիոստանդերի մեծ մասը հեռարձակվում էր Պորտուգալիայից, նա հիացած էր բանաստեղծ և դրամատուրգ Ֆերնանդո Աեստայով: Խոսեբան Պեսսոայի “*O Marinheiro*” (Ծովայինը) պիեսը թարգմանել է բասկերեն “*Marinela*” վերնագրով, որը հրատարակվել է Միկել Ալբիսուի կողմից, Բասկերի Երկրում:

...Քանի որ Խոսեբան փոփոխության հեռանկարներ չէր տեսնում, նա որոշեց լքել Բասկերի Երկիրը՝ տեղափոխվելով, նախ, ժնև, ապա՝ Ալժիր, որից հետո՝ Պրահա: Դա ողիսական էր մեկ ճամպուրակով, որտեղ կար մի զույգ տաբատ, մի քանի վերնաշապիկ, ներքնազգեստ, գուլպաներ և թենիսի կոշիկներ՝ նրա միակ ունեցվածքը: Այս միայնակ ճամփորդության հետքերը (և հատկապես՝ տագնապը) արտացոլված են նրա բանաստեղծություններում:

Սարիոնանդիան գտնում էր, որ Պրահայի և՛ կլիման, և՛ բնակիչները չափազանց սառն են իր ճաշակի համար: Եվ նա դիմեց Կուբայի իշխանություններին՝ իրենց երկիր մուտք գործելու թույլտվություն ստանալու համար, այն նույն պայմաններով, ինչ-որ ԷՏԱ-ի ութ տարագիր անդամներ մուտք էին գործել Կուբա մի քանի տարի առաջ, 1984թ.: Խոսեբան Կուբա ժամանեց հարյուրավոր մարդկանց հետ՝ գրպանում հարյուր դոլարանոց մեկ թղթադրամ: Նրան հատկացրին անվճար բնակարան և *լիբրետո* (մատակարարման գրքույկ), որով նա կարող էր պետական խանութներից սուբսիդավորվող սնունդ ստանալ: Նրա՝ ամերիկյան հարյուր դոլարանոց թղթադրամը երկու տարի հերիքեց:

Կուբայում Խոսեբան ապրում էր ուրիշ անունով, Բասկերի Երկրում մարդկանց մեծ մասը տեղյակ չէր նրա գտնվելու վայրի մասին: Իր փախուստի ավելի քան երեք տասնամյա-

կի ընթացքում Սարիոնանդիան ունեցել է ամենացածր համ-
բավը: 1998թ., երբ ԵՏՍ-ն միակողմանի հրադադար էր հայ-
տարարել, նա հրապարակեց մի հոդված, որտեղ նա գրել է.
«Շարունակել պատերազմը, չնայած այն այդքան էլ ինտեն-
սիվ չի եղել, բացասական էր և բացասական է բոլորի հա-
մար` եւ՛ ստրատեգիական առումով, եւ՛ բարոյական»:
Միևնույն ժամանակ, լքված կերպարը անսասան հավատա-
րիմ էր իր գրական գործունեությանը, նա շարունակում էր
խորապես նպաստել բասկյան մշակութային ժառանգության
տարածմանը: Նա գրում է գերազանցապես բասկերենով, եւ
նրա գործերի մեծ մասը թարգմանվել է բազմաթիվ լեզուներ-
ով:

Խոսերա Սարիոնանդիան ճանաչման պակաս գրեթե չու-
նի: Նա նույնիսկ ստացել է իսպանական մրցանակներ, մաս-
նավորապես` 1986թ., բասկերեն պատմվածքի համար, իս-
պանացի գրականագետների մրցանակը` «*Atabala eta
euria*» (Թմբուկն ու անձրևը) պատմվածքի և 2001թ. «*Lagun
izoztua*» (Սառեցված ընկերը) վեպի համար: 2011 թվակա-
նին Սարիոնանդիան արժանացել է Բասկերի Երկրի ամենա-
հեղինակավոր գրական մրցանակին` բասկերեն շարադր-
ված «*Moroak gara behelaino artean?*» (Մենք խափշիկներ՞
ենք մշուշում) էսսեի համար` գաղութատիրության արհա-
վիրքների մասին:

Վերջին` 18000 եվրոյի չափով մրցանակը շնորհվել է
Բասկերի կառավարության կողմից, սակայն այն չի հանձն-
վել հեղինակին և պահվում է մինչև նրա իրավական կարգա-
վիճակի որոշումը: Բասկյան իշխանությունները բազմակող-
մանի հետաքննություն են անցկացրել Սարիոնանդիայի
անցյալի և ներկայի վերաբերյալ, այդ թվում` Ինտերպոլի մի-
ջոցով, նախքան նրան մրցանակը շնորհելը: Այդ ժամանակ
օրենսդրական սահմանափակումները և նրա դեմ առկա բո-

Լոր դատական մեղադրանքներն արդեն չեղարկվել էին:
Իրականում նա արդեն ազատ մարդ է ազատության մեջ,
դեռ ավելին՝ ցանկության դեպքում կարող է նաև վերադառ-
նալ իր ծննդավայրը...

Ուիլյամ Ա. ԴՈՒԳԼԱՍ

/Չողվածը հրապարակվում է կրճատումներով/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԼՈՒՅՄԻ ԵՐԵՆԱՆԵՐԸ

Մոլորված թռչուններ 6
Նրանց, ում արմատներն այնտեղ են 7
Քանզի ոչ ոք ինձ չի ասում 8
Տունդարձ 9
Խորհրդածելով ժառանգների մասին 10

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՏԻ ԹԵՄԱՅՈՎ

Գրականություն և հեղափոխություն 12
Չորս հինգ վեց քարե պատ 15
Երկրորդ հարց 16
Երրորդ հարց 17
Հացադուլի քսաներորդ օրը 18
Մի ձեռք ունեցող մարդու ձեռքը 20
FIRĀQ 21
Նավաբեկության խաղ 22
Ազատ տարածք 24
Հիշողության նավահանգիստ 25
Մեր աչքերը 26
Մեկ այլ աշխարհ 27
Աշխարհի դյուրագգայունությունը 28
Այն ամենն, ինչ ունեն 29
Պաղեստինյան գերի 30

Ստրուկը	31
Մութ խաղաղություն	32
Սիրո պրոտոպոեմ	33

ՀՈԳ ՏԱՐ ՔՈ ՄԱՄԻՆ, ՀՆԱԶԱՆԳ ՅԱՀՈՒ

Ես սիրում եմ գրել կիտրոնաջրով	36
Սահման հատողները	38
Անվերջ գնացքը	39
BERETERRETXE-ի երգը	40
Ձերբակալվածի խոհերը	41
Գուշակություն	42
LINGUAE VASCONUM PRIMITIAE	45
Վաղուց մոռացված բանտախուցը	47
Մարտին լարալը	49
Գիտե՞ք ինչ է արդարությունը	51
Մնալու ու մեկնելու մասին	53
Դասալիքի ուղեբեռը	55
Ժամադրություն	57
Գիշերային գնացքներ՝ երկար ու թաց	58

ԾՈՎԱԳՆԱՅԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ

Նավաշինություն	62
Ճամփորդություններ օվկիանոսով	64
Լուրեր անհայտ կղզիներից	66
Մերլանդի մավահանգիստը	68

ՄԵԾ ՈՒ ՕՏԱՐ Է ԱՇԽԱՐՀԸ

Նամակ-պրեզիա	70
Աշխարհը մեծ է և օտար	72
«Աքսոր» բառի հնարավոր սահմանումներ	74
Քարեր և երկրներ	76
Պոեզիայի կորուսյալ գործը	78
Ազգային նախագիծ	80
Նամակ բանտարկյալ ընկերներին	82
Աշխարհագրություն	84
Այդ միտոսավրոսը	85

ՄԵՎ ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՈՉ ԿԱՏԱՐՅԱԼ

ՄԻԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դժվար ժամանակներ	88
Ոստիկանություն, խուզարկուներ, ինտերպոլի գաղտնի գործակալներ	90
TRASHOLOGY	93
Արդեն բալի սեզոն է	95
Պոեզիան մահացած է, բայց դա ես չեմ	97
Գոյություն չունեցող բաներ	99
Ճառ կյանքի վերջի մասին	100
Մահ	102
Կյանքը ժամանել է, այն քո աչքերում է	103
Շունը	105
Մթության արժևորում	107

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Բալլադ լծկան շների մասին	110
Քաղաքները	112
Մեղք	114
Գետը	116
Բանկի ավարառուներ	118
Հորիզոնի դեպանները	120
Ալբերտ Էյնշտեյնի լեզուն	122
<i>Հեղինակի մասին</i>	<i>124</i>

Խոսերա ՍԱՐԻՈՆԱՆԴԻԱ

ԲԱՆՏԵՐ ԵՎ ԱԶՍՈՐՆԵՐ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Քրիստինա ԲՈՉԱՐՅԱՆԻ

Բասկերենից անգլերեն թարգմանությունները՝ Ներեա Էլորիագայի /Nerea Elorriaga/ եւ
Թերեզա Ալդամիզի /Teresa Aldamiz/
Խմբագիր՝ Ուիլյամ Ա. Դուգլաս /William
A. Douglass/

Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 9 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության
տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաշունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Ջուզահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրբ.
Պատմվածքներ» - 2015
Արդի ժուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015
Բայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015

Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 1) - 2016
 Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
 Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
 Փախուստ դրախտից» - 2016
 Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
 Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
 պատմությունը» - 2016
 Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Սեր. երջանկություն.
 ռեպլիեմ» - 2016
 Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
 «Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
 (անթոլոգիա) - 2016
 Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
 Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,
 դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
 մշակույթը» - 2016
 Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
 Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
 Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
 Ինգերորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
 Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
 Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» - 2017
 Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
 Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
 Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
 Սյաո Յյան. «Վիշապի սորուքներն ընդդեմ
 նախագծերի» - 2017
 Ուան Յուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
 Ֆյոդոր Սոլոգուր. «Չնչադեր» - 2018
 Չինական ստքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 5) - 2018
 Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
 Մարտիրոս Ռբն. «Մոմերն իգուր եւ ալյովել
 մեղքերիս համար» - 2018
 Ռեյսին Սյուրն, Սյուն Դու. «Չինաստանի յուրահատկու-
 թյունները: Չինաստանի համաշխարհային
 ժառանգությունը»- 2018
 Չինական ստքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 6) - 2018
 Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների
 սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
 20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
 Չինական ստքի եւ մշակույթի հիմնական
 հասկացություններ (հատոր 7) - 2019
 Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
 Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
 Յերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020

Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի
մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Չրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Մեր, նյարդերի
քայքայում. ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021
Միխայ Ալվազ. «Այլ քաղաք» - 2021
Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայն»-2021



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. ասոցն՝ vogi.nairi@mail.ru
հեռ.։ +374 97252323

